Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17154
17155
17156
17157
17158

891.99
U-39

3755

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ.

ԿԱՊԻՏԱՆ ՊԵՏՐՈՍ ՄԱԴԱԹԵԱՆԻ

„ՍԷՅԵԱԴ“ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԼՈՅ,

Սկսեալ 'ի 15 Յունվարի մինչ ց 9 Մայիսի 1861 ամի։

Բ. մասն։

3697
47

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ.

Ի ԵՆՄԱՅ ԵՐԱՍԽԱՅ ԱՌ ԶԱՆԳԻ, ՈՐԷ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ԳԻՇԵՐ ԸՆԹԵՐՑԱԼԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՈՑ ԶՈՒ ԷՂԱԾՈՒՆԻ „ՀՈՐԻՄԱՐ ԱՌՆԱՅ ԲԱԽԱՐ ԶԱՆԳԻ“
ԷՐԳՈՅ ՏՈՒՆԿԱՑ, 18$\frac{15}{1}$61

Պատմութիւն իմ ես քեզ մեկնեմ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛.
Եղեմայ չորք գետից մէկն եմ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ադամից մինչ՝ ցՂրհեղեղ՝
Մէկ հարսն էի ամենագեղ.
Սրբակաց, անարատ, անմեղ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Աստուած զմեզ բաժանելիս,
Հայոց անկայ ես եղկելիս.
Կայէն սպանեց Աբելիս,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Տապան Նոյի մէջ ՝ի Մասիս,
Մերձ Հարևան եղև ընդիս.
Նոյ իւր ձեռօք տնկեաց զուռիս,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ներբողթ կառոյց զԱշտարակն,
Զաշխարհ ձգեաց իրան տակն,
Հայկ եղև նորա ներհակն,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Հայկ իւր ամեն սերնդովն,
Բնակվեց իմ եղերքովն,
Սեպհականեց դաշտն, ծովն,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Դեբրովմի լուեալ զայս լուր Հայկայ,
Շատ բազմութեամբ բարձրացեալ գայ,
Հայկ մէկ նետիւ զնա սպան,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Հայկ եղև Նահապետ Հայոց,
Գիտառատ հայր ժողովրդոց,
Եթող զնոսա իւր սերնդոց,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Սորա տոհմիցը նախ Պարոյր,
Եդ գլխոյն Արքայական խոյր,
Քաջութիւն շատ իմաստ ո՛չ գոյր,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Հայկազնեաց մէջ երկու Տիգրանք,
Ի շահ ազգին ցուցին շատ ջանք,
Հայք անդ տեսին մէկ խաղաղ կեանք,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Երբ վերջացան սերունդք Հայկայ,
Վաղարշակ եղբայր Արշակայ,
Յաթոռ Հայոց նստաւ Արքայ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Վասն Հայոց սահմանեաց կարգ,
Իշխան, ազնիւ, մեծութեան փառք,
Ռամկաց վերայ եդ թեթև հարկ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Սորա տոհմից մեծն Աբգար,
Երբ բանն հօր եկն յաշխարհ,
Հաւատաց մինչ հաւատ չ՚կար,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Յետ այնու սուրբ Գրիգոր,
Եղև Փրկչի բանից յորդոր,
Զգին զնա ՝ի վիրաբ խոր։
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Սուրբ կուսանք մտին Հայաստան,
Եղեալ Արարչին ապաստան,
Զնչեաց նրանց Տրդատ Արքայն,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Լուսաւորչին եհաս այս լուր,
Որ հորի մէջ նստեր տխուր,
Առանց հացի և առանց ջուր,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Գրիգոր Տրդատին շինեց խոզ,
Չի դեռ անգութ էր և գոռոզ,
Այսպէս ասէ Ագաթանգեղոս,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Տրդատ ընկալաւ սուրբ հաւատ,
Կոչեցաւ Յովհաննէս Տրդատ,
Հայք Քրիստոնեայ եղեն հաստատ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ես եմ այս բանի մեծ վկայն,
Զի իմ մէջն մկրտվեցան,
Նոր զգեստ հագաւ Հայաստան,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Լերինք ծաղկեցան վանքերով,
Դաշտք բազմամարդ քաղաքներով,
Գանձը բազմացաւ հանքերով,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Թէ և Հայք եղեն խաչապաշտ,
Մ'իմիանց ոսոխ մնացին անհաշտ,
Արեամբ լցուցին ձոր և դաշտ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Յետոյ սերունդ Բագրատունեաց,
Հայաստանի գահոյն տիրեաց,
Ազգը նրան անչափ սիրեաց,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Զի այս ազգից ծագեաց Արքայք,
Քաջամարտ էին և հսկայք,
Պատմութիւնք են սմա վկայք,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Լայնացուցին Հայաստանը,
Թշնամացաւ Յունաստանը,
Գրգռողն էր Վրաստանը,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Պարսիկք, Ալանք, Արապացիք,
Հռոմայեցիք, Յոյնք, Վրացիք,
Եղեն Հայերին քարաձիգ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Երբ խեղճ ազգն Ռուբենեանց,
Հայոց արքայից կարգն է անց,
Վրացացաւ պետն Արղութեանց, (*)
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Հայաստանի ջահը անցաւ,
Հաստատ ջահը տապալեցաւ,
Ատելութեամբ, չունէր այլ ցաւ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Հայաստուն մնաց իշխանաց,
Ի ներքոյ անհուն զրկանաց,
Զմնաց նշոյլ խղճմտանաց,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Իշխանք եղեն միմեանց ոսոխ,
Ազգը արարին ոտնակոխ,
Կողոպտեցին զաղքատ թէ ճոխ.
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

(*) Ըստ ասութեան Կիրակոս պատմագրի Գանձակեցւոյ յայնժամ վրաց հաւատն ընկալաւ եղբայր Զաքարիայ սպասալարի, Իվանէս Արղութեանցն։

Անմեղ արիւն Սուրբ Վարդանանց,
Հայոց բաղդին եղև մեծ ցանց,
Վասակ չարութեան ծիրն էանց,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Հայք չ՚կարացին դէմ առնուլ,
Սկսան յայլ աշխարհ փախնուլ,
Լինիլ օտարաց գերի, ղուլ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Կրելով զայս չափ տառապանք,
Թէ իշխանք թէ ազնուականք,
Վասն փրկութեան չարին չանք,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Թէ և ունին գիտութիւն ձիրք,
Շատ լրագիրք և օրագիրք,
Բայց են միմեանց հակադիրք,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ի՛ Մոսքուա գոյ Հայ-ճռաքաղ,
Եւ Հիւսիսափայլ զօշաքաղ,
Սա ուրացաւ իւր ազգը վաղ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ի՛ Տփխիս գոյ Հայոց Մեղուն,
Եւ Նորաեկ մի Հիւր թռչուն, (*)
Մինն նիրհէ միւսն է՛ի քուն,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

(*) Կառնէն Հայոց աշխարհի։

Մասեաց աղաւնին լրաբեր,
Ի՛ Փարէժէ եբեր մեզ սէր,
Առանց կոչման առանց հրաւէր,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Հայոց պարծանքն էր թուր և սուր,
Իսկ այժմ է փետուր և մուր,
Նա և հակաճառութեան հուր,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ազգաց մէջ Հայն էր առաջին,
Նիզակը ձեռին ձին տակին,
Ատելութեամբ եղև վերջին,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ինքս եղեմական զաւակ,
Գետոց Թագուհի գլխոյս թագ,
Փայլէի իբրև Արեգակ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Դաշտքս քաղաքօք զարդարված,
Եղերքիս հարսն աղջիկ շարված,
Նրանցով էի մեծարված,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Երբ ամայացաւ Հայաստան,
Որդիքը եղեն ցիրուցան,
Փառք պատիւս ստորացան,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Այժմ գործքս եղել է լաց,
Զունիմ պատիւ և շուք փառաց,
Եղէ նաժիշտ օտար ազգաց,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Իբրև Սոխակ Աւարայրի,
Սևազգեաց եմ որպէս այրի,
Չիս ըմպեն անասունք վայրի,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Փոխանակ մեր սուրբ զանգակին,
Մօլլէն մասջիտի գնտակին,
Կոչէ իւր չար աւազակին,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Սրտիս ցաւը ո՞ւմ պատմեմ ո՞ւմ,
Մէկ սրտացաւ Հայ չեմ գտնում,
Թոքս էնդուր է միշտ երվում,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Պտղաբեր Հայոց դաշտերն,
Անթիւ այգիքն ու արտերն,
Թուրքն ու Քուրդն է նոցա տէրն,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Եղեալ եմ ես իսկ մեռեալ դի,
Անպատուութեամբ ազգի ազգի,
Միմիայն Հայոց պէտքին չի՛,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ո՞ւր են իմ արքայազունքս,
Իշխանազնեայ դիւցազունքս,
Կորեան մթնեց աչքս, ունքս,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Ո՞ւր են իմ սուրբ Հայրապետքս,
Քարոզ բանին վարդապետքս,
Որք չեն լցուցանում պէտքս,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Գլխոքս անցաւ քանի դար,
Մնացեալ կամ առանց սատար.
Մաղթանքս չեն առնում կատար,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի՛։

Զունիմ մէկ սրտակից ընկեր,
Որ միաբան կոչենք առ Տէր,
Իցէ թէ զթայ ազգին մեր,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Եթէ Աստուած չառնէ խնամ՝
Հայոց, և ես անտէր մնամ,
Գիտեմ անշուշտ կըչորանամ,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Երբ Հայք Հայաստան կդառնան,
Չիս չեն գտնել սուգ կըառնան,
Կայրի երկիրն Արարատեան,
Ականջ արա՛ քոյր իմ Զանգի։

Սևանայ ծով է քոյ մայրդ,
Երևան հարազատ Հայրդ,
Քասաղ (*) գետն է մեծ եղբայրդ.
Ականջ արա՛ քոյը իմ Զանգի՛։

Արի նստիր միասին լանք,
Անցեալ աւուրց երանի տանք,
Զոր կորուսինք էլ չի գտանք,
Ականջ արա՛ քոյը իմ Զանգի՛։

Այժմեան փողասէր Հայերը,
Զունին հին հայոց պատկերը,
Մոռացան հայրենեաց սէրը,
Ականջ արա՛ քոյը իմ Զանգի՛։

Փողն է նրանց հայրենիքն,
Նորա համար կանեն ճիգն,
Մոռացել են զիմ տիւնքն,
Ականջ արա՛ քոյը իմ Զանգի՛։

Զեն ափսոսում թագն ու գահը,
Գայիսոնն ու պողպատ զրահը,
Նոցա յոյսն է դրամոց շահը,
Ականջ արա՛ քոյը իմ Զանգի՛։

Ինչ մարդոյ խիղճը քարանայ,
Շատ յանցանաց կը տիրանայ,
Անխիղճ մարդը իսկ Տիրան ա,
Ականջ արա՛ քոյը իմ Զանգի՛։

(*) Քասաղ գետին այժմ Արարատեան աշխարհի ընակիչքը Կարբու գետ են կոչում, որովհետև նա Կարբի գիւղաքաղաքի տակովն է անցնում, և ուռուզեալ զայրեա և զարտորայս զիւղորէնց Աշտարակա, Օշականու, Վաղարշապատու և այլոց բազմաց, անկանի ի գետն Երասխ։

Հայոց ազգիցը քանի հատ,
Իմ դառն օրըս շատ լացին շատ,
Յորոց մինն էր յայտնին Սէյեադ,
Ականջ արա՛ քոյը իմ Զանգի՛։

***

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ռոմէական հեղինակին։ (*) 18$\frac{16}{1}$61

Լո՛ւր աշխարհ դու լո՛ւր վարուց իմոց ճառ,
Ազգաւ իսկ Հայ եմ, Հայ և ուղղափառ,
Որովհետև խիղճ իմ է սուրբ պայծառ,
Պանծալով շրջիմ իբրև ոսկեայ կառ։

Պատուեմ զհեզս և ոչ հզօրըս,
Աչառել չ՚գիտեմ հօրըս և մօրըս,
Այսու պատճառաւ միշտ սև է օրըս,
Դատարկ գրպանըս, հնացեալ շորըս։

Ճշմարտութիւնն է իմ կերակուրըս,
Նովաւ առնեմ ես միշտ առ և տուրըս,
Արդարութիւնն է երկայրի սուրըս,
Նովաւ շինջանի բարկութեան հուրըս։

Կաշառը յաչս իմ է նիւթ այլանդակ.
Իսկ կաշառառուն խոզ կամ աւանակ,
Եթէ կաշառը տայ ինձ անգին թագ,
Նրան սիրողին եմ ես միշտ ներհակ։

(*) Տե՛ս 9 և 10 երրորդ երեսքն երկրորդ տետրակի նոր քնարին Հայաստանի, տպագրեալ ի 1865 ամի ի Մոսքուայ։

Խստիւ դաւոեցի գող և զաւազակ,
Զննեալ զպատճառ մեղայ և քանակ,
Զարագործ անձանց չեղէ օժանդակ,
Սովաւ ժողովուրդք էին զոհունակ։

Ի բարօրութիւն եղկելի ռամկաց,
Ամենայն կերպիւ եղէ սրբակաց,
Ո՛չ ըմպեմ զկուր ո՛չ ուտեմ զհաց,
Զորս չեմ գնեալ, այլ է օտարաց։

Ընդէմ օրինաց չ՛փոխեմ զքայլ,
Չեմ ես բանաւոր հօտի միջին գայլ,
Կարճն ասեմ խիղճս է հրեղէն սայլ,
Որ միշտ վերանայ յերկին լուսավայլ։

Վերջ յամենայնի էի ազգասէր,
Թէև նա յինէն անյագ բամբասէր,
Տեսի շատ իշխան, ազնիւ, տղայ, ծեր,
Չ՛գիտեմ ընդէ՞ր չ՛գտի մէկ ընկեր։

Ըստ վարուց մարդկանց յայտնի է ինձ քաջ,
Չի ընթացք իմ են յաչս բազմաց տհաճ,
Սէյեադն եմ եթէ հանցեն զիս 'ի խաչ.
Ուղիղն կասեմ դիմելով յառաջ։

*
* *

ՁԱՅՆ.

Ուրոգաւ էրեն Հայասպանի սա Հայկազուն մանուկ մի
Սէյեադ անուն։ 18$^{1}_{1}$61

Ողջոյն քեզ ազնի՛ւ մանուկ Հայկազուն,
Աղանդաւո՞ր ես թէ Հայ Հաստատուն,
Զի այժմեան ուսեալ Հայք այնպէս կարծեն,
Թէ ով հերձուածող է՝ էէ և գիտուն։

Դէմք քոյ ցուցանեն զքոյդ Հայութիւն,
Զգեստ քոյ ծագէ յիս երկբայութիւն,
Եթէ չունենաս ճիշտ վկայութիւն,
Չեմ հաւատալ թէ Հայկազարմ ես բուն։

Այժմ Հայաստան է աղանդոց բոյն,
Ի նմա գոյ Պարսիկ, Տաճիկ, Ֆռանգ, Յոյն,
Ի սուգ Պարթևեան Գրիգորի(*) հոգւոյն,
Հօտ նորա չունի հովիւ մի արթուն։

Արդեօք խօսի՞ս դու Հայկական լեզուաւ,
Թէ Հայը քոյ քեզ խորթ շաւիղ ցոյց տուաւ,
Մինչ ցարդ յաշխարհի բարէ, ով լուաւ,
Թէ գայլք բազմանան հովիւք մնան, քուն։

Այժմեան հովիւք մեր յանկիւնս վանից,
Նիրհեն հեռացեալ յամենայն բանից,
Կթեն զպտուղս սերմանց, հնձանից,
Ի խաղաղութիւն մեր ամենեցուն։

(*) Գ. Լուսաւորիչն Հայաստանի։

Ճշմարիտն ասա՛ մի՛ զաղել հոգիս,
Սիրե՛ս և զվահս թէ միայն զուտիս,
Բազումք յօտարաց ուտեն մեռեալ դիս,
Նոքա բարուք մարդ են և վարուք շուն։

Հա՛ն ընկեա՛ ի քէն զայդ հանդերձ օտար,
Դարձ առիս տո՛ւր զիմ արտասուց դաղար,
Զի բաղձանք սրտիս մնացին անկատար,
Ի միջի լերանց եղէ յոյժ նկուն։

Հայկազինք չեղեն միմեանց կողմնապահ,
Կորուսին զթագ- գայիսոն և զգահ,
Հայը իւր ձեռօք արքոյց ինքեան մահ,
Ցիրուցան եղև որպէս անասուն։

Ես այսպէս դատեմ ըստ նորա դրութեան,
Թէ չ՛ունենա յոյս կրկին յարութեան,
Ինչ ազգ յետևի մտաց կուրութեան,
Սէյեա՛դ չէ կարող պահպանել զանուն։

*
* *

ԶԳՏՈՒՄՆ ԴԱՏՈՂՈՒԹԵԱՆ.

18$\frac{20}{1}$61

Ո՞րն է թանդ արդեօք մարդկային աչքին,
Ոսկի և ակունք թէ սրբակաց կին.
Ասացէք տեսնեմ սրանց ո՞ր մէկին,
Բանական մարդը կ՛տայ հարուստ գին։

Իշխանք միշտ իրանց ծառայից կլտան,
Նախ ստոր յետոյ բարձր զաստիճան,
Սա է ապացոյց անփոփոխական,
Որ գանձն է երկրորդ՝ կինն է առաջին։

Աստուած Ադամայ շնորհեց զամենայն,
Բարիքն աշխարհի մնաց մէկ Եւայն,
Հուսկ յետոյ ստեղծ տուաւ նմա և զայն,
Ուրեմն կինն է պարգևքն վերջին։

Ուրեմն եթէ մարդը միշտ գանձին՝
Սիրէ պահպանել ծածուկ առանձին,
Ընդէ՞ր չէ պիտոյ զաղել և զկին,
Յորմէ ծնանիլ կարէ ցաւ ուժգին։

Բազումք ուրացան զայս օրէնք բնական,
Զորս ՝ի դրախտի ետ Աստուած մարդկան,
Այս մեղաց պատճառ եղև Եւրոպան,
Յորում կինն է այր իսկ այրն կին։

Զ՝գիտեմ ընդէ՞ր այս վնասաբեր ծէս,
Երևեաց այսքան մարդոյ քաղցր ՝ի տես,
Ո՞վ Հայը երկնաւոր ինքդ ազատես,
Այս չար ախտերից մեր որբ Հայերին։

Հայը կորուսեալ վանքս, զապարանս
Արքայս, իշխանս, օրէնս, դատարանս,
Անխախտ պահպանեաց նա զպատկառանս,
Որք հանդերձ շնորհաց են բանականին։

Հայկածին կանայք զծէս հայրենեաց,
Մինչ ցյաւիտեան Երբ՝ կը թաղուն բաց,
Ամուսինք նոցա ցանկացեալ փառաց,
Նօքօք միշտ որսան զսիրտ օտարին։

Սորա աղբիւրն է քաղաքն Տփխիս,
Որոյ արարքն զզուէցուցին զիս,
Նա զ . . . . իւր վարէ որպէս ձիս,
Վ . . . . . է՛ի միջի հրապարակին։

Սա չէ մէկ արատ, այլ վիճակ որբոց,
Արդեօք ո՞ր որբոյ սիրտն է առանց խոց,
Վասն ազգասիրաց սա է անշէջ բոց,
Սէյեա՛դ տաղ ես գիմա՛ց այս կրակին։

* *
*

ՔԱՌՕՏՆԵԱՆ ՈՏԱՆԱՒՈՐ.

18½61

Արժանընտիր բժշկապետ՝ անունդ գիտուն դու տգէտ՝
Երևի դու էլ միտք ունիս՝ կոչիլ անվեղար վարդապետ.

Ինքդ անճոռնի ճարտասան՝ կոչվում ես նոր լիտերական՝
Նախ հա՛ն զգերան քոյ ական՝ որ կարես լինիլ կարապետ.

Ժիր աշակերտ Էսկուլապայ՝ քանի օր է փորբս կապ ա՝
Քեզ կտամ մէկ մահուդ կապայ՝ եթէ առնես ցաւս անհետ.

Ըստ քոյ ասից հազրաթ Ալին՝ է սուրբ Պօղոս շնորհալին
Քոյ շատ անաչառ խօսալին՝ երախտապարտ է Մուհամմէդ.

Քոյ աչքումդ Հայն ու Թուրքը՝ մէկ են զի դու սիրես տուրքը՝
Դու խաչ չես պատվում այլ կուռքը՝ քեզնից անհաւատ էր փեսէդ.

Երևան նորա գործերը շատ լուան իմ ականջները՝
Վասնորոյ երկնային Տէրը՝ կորոյս զնա էնտեղէ վէտ.

Պապդ կոչիւր Ռօստոմոս—զալ՝ կամում էիր փոդս կուլ տալ՝
Առանց դանակ առանց դրգալ՝ անպիտան ազարի հետ.

Ասենք առաջի անգամը՝ չի յաջողվեց առնուս համը՝
Սէյեադին . . . . . դու բժշկեա՛ զի է ախտաժէտ.

*
* *

ՅՈՐԴՈՐԱԿ ՎԵՐՆՈՅՆ.

Կամքդ մնաց ո՞հ անկատար պատուելի,
Հարկաւոր է քնթիդ նկար պատուելի,
Ցաւոյ ձեռից չունիմ դադար պատուելի,
Ինձ հիւանդիս արա՛ մէկ ճար պատուելի։

Քանի օր է յանկողնի մէջ պարկած եմ,
Ուզենամ քեզ կապկի նման պար կածեմ,
Մկան աղբը չորացնեմ պարկ ածեմ,
Թէ հարկաւոր լինի ես տար պատուելի։

Սէյեադդ եմ քեզ գլխովին հարազատ,
Դժոխական գերուլթենէ յար ազատ,
Թոյլ չես տալ թէ ձեռդ ձգես՝ յօրա(*) զատ,
Ես եմ գիժ թէ դու ես յիմար պատուելի։

(*) Ըստ Ղարաբաղցւոց՝ ո՞ւսամ է քան. ասել է։

3697
47

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ.

Հ. ԱՆՑ ԸՆԴ ՀԱՊՈՒԱՑ ՎԱՍՆ ԻՐԱՒԱՆՑ: 18½61

Իրաւանց կորուստն անբան կենդանիք կամաւ չեն տանում,
Բանականք(*) այս կորուստի՝ գինը երբէք չեն հասկանում։

Աւանդութեամբ պատմում են՝ թէ մեր նախնեաց ժամանակն,
Երբ չԱստուածք բաժանեցին տիփ արարածոց վիճակն,
Շանը տունը սահմանվեց՝ 'ի բնակութիւն կատվին բակն,
Խեղճ կատվին շատ չարչարում էր՝ տարվայ ամեն եղանակն,
Ձմեռնը ցուրտն էր նեղում՝ ամառը ջերմ արեգակն,
Որովհետև շունը էր՝ կատվի նախնական ներհակն,
Պատահելիս ջնջում էր՝ թշուառի կենաց մուրհակն,
Այսպէս է գրում գոնեայ՝ հին պատմութեանց հեղինակն,
Տիփ գիտենք որ խղճմտանք չի՛ լինիլ շան պէս գազանում։
Իրաւանց կորուստն և այլն։

Մէկ քանի դար կատուքը՝ համբերեցին այս տանջանաց,
Նրանց յոյսը գլխովին՝ մարդկանց մօտ անկատար մնաց,
Ո՛չ նստելոյ տեղ էին՝ տալիս և ո՛չ ուտելոյ հաց,
Սոյն աղագաւ կատուաց՝ գիշերը սուգ էր տիւը լաց,
Անբաղդի վատ վիճակը՝ ընթերցող դու սովաւ զգա՛ց,
Որ սիրտը մեռած կուլի՝ աչքերը արտասուքով թաց,
Շուների արտօնութեան՝ ժամանակը երկար գնաց,,
Լիութեան մէջ լողում էին՝ ըստ գթութեան բանականաց,
Կատուներից շատերը՝ սովամահ էին մեռանում։
Իրաւանց կորուստն և այլն։

(*) Որոյ կենդանի օրէնքն է Հայոց ազգն։

Այս չար դրութեան ձեռից՝ բողոքել սկսան կատուք,
Չ'էին կարում դիմանալ՝ բարակ մորթով փափուկ վարուք,
Ամառն տօթն էր նեղում՝ նրանց ձմեռն հողմ և բուք,
Մինչ ցհասանիլ աշնան՝ մեռանում էին վաղ օրուք,
Շների տեղն էր միշտ տաք՝ զի ունէին պատիւ և շուք,
Նրանց մաղմազոտ կաշին՝ խորհրդարան շինեցին լուք,
Մարդիք յոյժ զզուել էին՝ զի շատ արծակէին զփուք,
Որովհետև անամօթ էին հեշտեաւ կրէին մուր, թուք,
Զի անամօթները միշտ՝ անպատուութեան լաւ են դիմանում,
Իրաւանց կորուստն և այլն։

Կատուները բաղձանօք դարձան առ չաստուածն Ապողոն,
Ասացին ո՛վ արարիչ երկնի և երկրի գեր զգո՛ն,
Համայն արարածք սիրով՝ կատարեն վասն քոյ մեծ տօն,
Յամենայն կռքանոցում՝ ունիս ոսկեզօծ ամբիոն,
Քեզ հոգւով ծառայ էին՝ Յոյն, Ասորի, Հայկազն և Հոն,
Թէ մեք թերահաւատ եմք՝ կարես առնել մեզ օ՛ն և օ՛ն,
Կամ խեղդել մեզ ծովու մէջ՝ որպէս որ կորեաւ Փարաւօն,
Աշխարհի մէջ որքան որ՝ գանազան արարածներ գոն,
Ոչ մէկին էն տանջանքը չունի որ միշտ գոյ մեզանում։
Իրաւանց կորուստն և այլն։

Մեզ տուել ես թոյլ մարմին՝ և մորթի չափազանց բարակ,
Ապրուստի համար մեզ ո՛չ օթևան տուիր ո՛չ ճարակ,
Մարդը մեզ չէ թոյլ տալիս՝ որ մտնենք համբար կամ մարագ,
Կեանքներումըս մթնում ենք լինում, չեմք տեսանում ճրագ,
Այս բաները մեր սրտի մէջը ձգել են վառ կրակ,
Շունը իր հաստ մորթովը՝ ստացել է քաղցր վիճակ,
Ամառ ձմեռ ընդ մարդկանց՝ բնակվում է օճառքի տակ,

Թէև նա բանականաց հետ ապրելոյ չէ ընդունակ,
Բայց որովհետև դու ես սահմանել մարդ չի անցանում։
Իրաւանց կորուստն և այլն։

Մարդիք շների ձեռից՝ յոյժ վաղուց են գանգատաւոր,
Նոքա չի պղծած պղինձ՝ չը՛կայ անկոթ և կոթաւոր,
Շները միշտ անդադար՝ վատ փուք արձակել են սովոր,
Շունը տան մէջ պիտոյ չէ՝ մեք եմք անդ անչափ հարկաւոր,
Տունը կը սրբենք մկնից՝ որք ունին յոյժ անյագ որկոր,
Զեն նայիլ լաւին վատին՝ կը կտրեն հանդերձ հին և նոր,
Շունը նրանց չէ վնասում՝ զի սիրում է նման եղբոր,
Գթա՛ մեր դառը կենաց՝ շնորհեա՛ մեզ մէկ քաղցր օր,
Ի՞նչ է պատճառ որ շանը՝ սիրում ես մեզ սպանանում։
Իրաւանց կորուստն և այլն։

Կատուների բողոքը Ապողոնի սրատես աչաց՝
Ճշմարտութեան համեմատ՝ ընդունման պատշաճ երևաց,
Ամենայն չաստուածներին՝ փութալով առ ինքն կոչեաց,
Կատուաց աղերսանքը՝ նա ամենին մէկ մէկ ասաց,
„Առէք նայեցէք դուք զայս՝ կամ ստորասացէք կամ բաց,
Այս բանին ես չեմ պատճառ՝ այլ էր չաստուածն նախնթաց,
Եւ ես չո՛ւզեցի փոխել՝ յիշատակ, նմա՝ երկար մնաց,
Իսկ այժմ տեսնում եմ որ՝ կատուք են անճարակ անհաց,
Ձեզ եմ յանձնում զայս գործը՝ վճռեցէք ինձ շահ էք իմանում։“
Իրաւանց կորուստն և այլն։

Չաստուածները սուր աչօք՝ տեսին կատուք չունին նպաստ,
Նրանց կաշին բարակ է՝ շներինը բրթբրթոտ, հաստ,
Վերջնոց չեն երկիւղալի՝ ոչ ամառ տօթ ոչ ձմռան սաստ,

Միաբան խորհուրդ արին՝ չաստուածները ամենիմաստ,
Կատուներին տուն տանեն՝ շներին հանեն առանց փաստ,
Իշխանութեան վճիռը՝ ի՞նչ կանէ ծածկոց, առագաստ,
Նրանց սրտից թափանցեց՝ կատուների դէմքն նուաստ,
Շունից կատուն խոնարհ է՝ ով է կարող լինիլ ուրաստ,
Նորանում կոշտութիւն գոյ՝ անչափ կակղութիւն սորանում։
Իրաւանց կորուստն և այլն։

Մարդիք վճռով չաստուծոց՝ շներին տունից հանեցին,
Որը որ չէր ելանում՝ նրան մտրակաւ գանեցին,
Շանց վարքը ընդ կատուաց՝ փորձելով զանազանեցին,
Ամենայն կերպ կատուի՝ վարմունքներին հաւանեցին,
Մարդիք դիփ կատուներին՝ իրանց մէջը բաժանեցին,
Մէկին Ֆաթմայ,(*) մէկին մաշայ, մէկին շաշայ, անուանեցին,
Ինչ տան որ մուկն գտին՝ կատուք ճարթեալ սպանեցին,
Որը որ չի բռնուեց՝ սահմանից հանեալ վանեցին,
Տան միջին սկսեցին՝ նազով բնակիլ իբրև խանում։
Իրաւանց կորուստն և այլն։

Շունք այս նոր վիճակի մէջ՝ մտին ի ժամանակ գարնան,
Մինչ տաք էր տրտունջ չ՛կար՝ բայց եհաս եղանակ աշնան,
Անասունք ամեն ուրեք՝ ցրտից վախնալով գոմ մտան,
Շունք մնացին բակումը՝ կատուք երջանկացան ի տան,
Նախ զգալի չի լինիլ ցաւը յետոյ կը՛գառնայ բան,
Հաւաքվեցին ի մի վայր՝ խորհուրդ արարին անագան,
Թէ ո՞րպէս փրկվին արդեօ՞ք՝ այս ծանրագոյն բեռնի տական,
Միտք եդին որ այս մասին՝ Ապողոնին մէկ խնդիրք տան,
Թէ իրանք նորա այս վատ վճռից անչափ են նեղանում։
Իրաւանց կորուստն և այլն։

(*) Շերվանայ առաջնորդ Յոհան Արք-եպիսկոպոսին մէկ կատու ունէր սև գունով և անունն Ֆաթմայ էր։

Որոնեալ իրանց միջից՝ գտին մէկ լաւ խնդիր գրող,
Որ մարդկանց մէջ էլ հազիւ՝ կուլի էնպէս օրէնք գիտող,
Քերական և ճարտասան՝ կամ տրամաբանօրէն դատող,
Նորա գրածի միտքը՝ չէր հասկանալ ամեն կարդող,
Ինքն էլ ցաւակից գոլով՝ խնդրատուներից չ'էառ փող,
Ասաց իմ գրածներիս՝ ով կարող է ներհակի թող,
Մեր այս հին իրաւունքը՝ առնուլ 'ի մէնջ ոչոք չէ կարող,
Միայն ձեր միջիցն ասաց՝ պիտի ընտրէք գործ կատարող,
Ով գործակատար չունի՝ բանը կարգին չի վերջանում,
Իրաւանց կորուստն և այլն։

Ասեալ գրիչն 'ի թաթ իւր՝ խնդրագրին սկիզբն արար,
Ասաջին գինուոյ բաժակ՝ բերանին քաշելոյ ծրար՝
Գրեց. „Ո՞վ մեծդ Ասպոզոն՝ անաչառ և ամենարդար,
Քոյ մօտ երբէք ճշմարիտ՝ բան չի մնացել առանց կատար,
Դու ամեն տեղ եղել ես՝ նեղելոց նպաստ և սատար,
Կատուների բողոքը՝ դու ի՞նչ դռնով արդար զատար,
Որ մեր հին իրաւունքը՝ մեզնից առիր նրանց տուար,
Արդեօք սա քոյ կամքդ էր՝ թէ այլոց խորհրդին լուար,
Մեք մինչ ցարդ այսպիսի թիւր՝ վճիռ չ'ենք տեսել քեզանում“։
Իրաւանց կորուստն և այլն։

„Դու որ համայն աշխարհը՝ ստեղծեցեր միով բանիւ,
Քոյ մեծամեծ գործերդդ՝ ոչ քանակ ունին ոչ հաշիւ,
Արևը ստեղծեցեր որ յօրինէ գիշեր և տիւ,
Քոյ ձեռօք է պտտում՝ անսահման էակաց անիւ,
Քեզանով 'ի յայտ եկին՝ օր, ամիս կամ տարի և թիւ,
Մեր երեք հազար ամեայ՝ իրաւունքն առեր ի՞նչ յարգիւ,
Մեզ թողիր ամօթալի՝ չնչին կատաց ետուր պատիւ,

Նոցա տասն մեր մեկին հաւասարիլ կարեն հազիւ,
Զ'իմացար որ դու սովաւ՝ վատ անուն ես սեպհականում։“
Իրաւանց կորուստն և այլն։

. . . . . .

“Նրանց ազահ բնութիւնն չկայ գողում, աւազակում,
Մեզ զրկելով իրաւանց վատ համբաւ ես հրատարակում։
Էլ ո՞նց քեզ արդար կարեմք անուանել մեր հրապարակում,
Մինչ քոյ այս թիւր վճիռը՝ լսողների սիրտն է ծակում,
Հնութեան օրինքները՝ յայտնի սա մեր շահն են հակում,
Մեր հաստատ իրաւունքը՝ նոցա մէջ են պարունակում,
Բաց 'ի քէն մեք յոյս չունիմք՝ դու մեր ցաւին դեղ չես անում։“
Իրաւանց կորուստն և այլն։

,,Քոյ այս վճռոյ պէս վճիռ՝ մեք մեր կենաց մէջ չենք լսած,
Կարծում ենք որ ոչ ոք էլ՝ լսած չ'լինի լուսնից ցած,
Շանը զրկել՝ կատուն յարգել՝ աշխարհիս մէջ ո՞վ է տեսած,
Արդեօք արարածոց միջին զո՞յ կատուից վատ ստեղծուած,
Որ մեր հին իրաւունքը՝ առնելով նրանց ես տուած,
Կամ պիտի խօսքդ փոխես՝ կամ ասես թէ չես մեր չաստուած,
Թէ ոչ կատուներին կուտենք՝ վասն զի շատ եմք բարկացած,
Չենք նայիլ եթէ որ դու՝ այս խօսքով լինիս բորբոքված,
Չրկողութեան ցաւը մեծ է՝ մի՞թէ դուք չէք զանազանում։“
Իրաւանց կորուստն և այլն։

Յետ այնու շունք ընտրեցին՝ իրանց միջից քանի դեսպան,
Որ խնդրագիրը տանեն՝ յանդիման Ասպոզոնին տան,
Թերևս այս դեսպանքը՝ փուք չարձակեն չաստուծոց տան,
Ամենի պոչին մէկ մէկ՝ տօպրակ հոտով մեխակ կապան.

Որ նրանց փքոյ զազիր հոտոյն նովաւ լինիցի խափան,
Այս դեսպանքը գնացին՝ մինչի ցայսօր ետ չի եկան.
Այս մասին շուները երբ՝ մէկ անծանօթ շուն կը տեսնան,
Նոյն ժամայն կը հոտոտեն՝ այն օտար շան պոչի տական,
Միայն յիշեալ դեսպանքը՝ մինչի յիմայ յետ չեն դառնում։
Իրաւանց կորուստն և այլն։

Սէյեմդ բաւ է յիմարին չեն խրատել շունն և կատուն,
Յիմարն թէև ունի մարդոյ ձև բայց է անասուն,
Շատ մարդ գոյ որ 'ի զուր է՝ յինքն կրում մարդոյ անուն,
Այլ պիտի կոչած նրան՝ ոչ թէ մարդ այլ մարդակերպ շուն,
Մարդ գոյ որ անբան կատուն՝ է նորա մօտին իմաստուն,
Ով մտաց աչօք կոյր է՝ չէ կարող աշխատել զանուն,
Նա ոչ վիճակ կ'ունենայ՝ ոչ տոհմ, ոչ ընտանի, ոչ տուն,
Երանի է էն մարդոյն՝ որ է աչալուրջ և արթուն,
Մտաց կուրութիւնն է միշտ՝ մարդոյ գործերը խափանում։
Իրաւանց կորուստն և այլն։

***

ԶՐՈՅՑ.

Ի Պէմոց Ի-ԲԱԿՈՆՉԻ-Ը ԱՆՑԻՆ ԱՌ ՄԷՂՔՆ. 18½61

Մէղք ես քեզնից չեմ զզուել՝ բայց ծերացել եմ կար չ'կայ,
Ծերը մեծ ցաւակար է՝ նրանից խիստ տկար չ'կայ.
Ծերութեամբ հիւանդներին՝ կենդանանալոյ ճար չկայ.
Այս հասակումը ես քեզ՝ ծառայելոյ հնար չկայ.
Ով որ կեանքին յոյս կապէ՝ նորա նման յիմար չկայ։

Մէղք դու նախ հայր Ադամին՝ խոստացար աչքերը բանալ,
Կերաւ մահուան պտուղը՝ ցանկանալով Աստուածանալ,
Քանզի չ'կայ հողեղէն՝ որ չի կամենայ բարձրանալ.
Սատանան որ հրեշտակ էր՝ չի կարաց քեզ ընդիմանալ,
Քոյ լծոյ ձեռիցն ազատ՝ երկնքումը կամար չ'կայ։

Մէղք դու մէկ էնպէս բան ես՝ մարդը քեզ ատել չէ կարող,
Հողեղէն բնութիւնը քոյ՝ ձեռից գանգատել չէ կարող,
Ցայտնի բան է մարդ իրան՝ սիրելին դատել չէ կարող,
Մարդն ու դու մէկ մարմին էք՝ ձեզ ոչով զատել չէ կարող,
Քեզանից փախնող երբէք ուրար, ֆիլօն, վեղար, չ'կայ։

Մէղք եթէ դու չի լինիս՝ մարդը երբէք ջանք չի ունենալ,
Թէ որ դու չի յորդորես՝ նա վայելուչ կեանք չի ունենալ,
Քեզանով է բարեգործ՝ թէ ոչ խղճմտանք չի ունենալ,
Դու չի լինիս իմացիր՝ որ նա ստգտանք չի ունենալ,
Քեզ խոնարհ ծառայ չեղած՝ ոչ հին և ոչ նոր դար չկայ։

Մէղք ես իմ կենաց միջին՝ բազում երկիրներ եմ տեսել,
Հոգևոր և մարմնաւոր՝ կանոնադիրներ եմ տեսել,
Մանուկ ու երիտասարդ՝ զառամեալ ծերեր եմ տեսել,
Ամենին ես քեզի հետ՝ հարազատ ընկեր եմ տեսել,
Միով բանիւ քեզանից՝ հրաժարվողին դաղար չկայ։

Մէղք եթէ ասեն մարդը՝ քեզ ատում է, մի՛ հաւատալ,
Թէ տեսնես քոյ ձեռից միշտ գանգատում է, մի՛ հաւատալ,
Որ ասեն թշնամիդ անասլատում է, մի՛ հաւատալ,
Կամ թէ այս ինչ դատաւոր՝ քեզ դատում է, մի՛ հաւատալ,
Չի սորա հաստատութեան մասին դեռ դաղափար չկայ։

Մեղք մարդկային ազգը քեզ՝ էնդուր ընտրեց որ ազդուս ես,
Արդարութիւնը դառն է՝ քաղցրութեան աղբիւրը դու ես,
Սիրելեաց յոյժ հաճելի՝ թշնամեաց շատ ահարկու ես,
Մարդոյ մարմինը նաւ է՝ դու էլ ղեկավար նաւու ես,
Սա է պատճառ որ կասեն՝ աշխարհի մէջ արդար չ'կայ։

Մեղք քեզանից քաղցրահամ՝ արդեօք էլ բան կա՞յ թե դուս ես,
Ըմպելեաց մէջ համադամ՝ արդեօք էլ բան կա՞յ թէ դուս ես,
Ինքնիշխան ու ինքնակամ՝ արդեօք էլ բան կա՞յ թէ դուս ես,
Ցանկալի յամենայն ժամ՝ արդեօք էլ բան կա՞յ թէ դուս ես,
Ով որ քեզ չի ճանաչում նրա նման տաւար չ'կայ։

Մեղք չեմ կամում քոյ ամեն՝ զօրութիւնդ պարզապանել,
Քանզի շատ կեղծ մարդիք գոն՝ որ չեն կարող խօսքս տանել,
Նոքա վատդ խօսելով՝ մեծ պատիւ են սեպհականել.
Միշտ քոյ միջից լողալով՝ իրանց արդար են անուանել,
Բայց եթէ լաւ նկատես՝ նրանց պէս էլ վատթար չ'կայ։

Մեղք քոյ դովասանքներդ՝ ո՛չ չափ ունին և ո՛չ քանակ,
Թէ ծառոց տերևքը թուղթ լինին և ծովերը թանագ,
Չեմ կարող հարուստ պատմել՝ աշխարհին երկար ժամանակ,
Սէյեադն եմ ճշմարտախօս՝ գտակս հին, կոշիկս ծակ,
Ստախօս մարդիքը ինձ վերայ չի ձգած քար չկայ։

*
* *

ՀԱՐԿԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ.

Հպատակն է արմատ թագաւորն է ծառ,
Ծառը արմատով կանաչ է պայծառ,

Տապարաւ մի՛ հար նորա արմատին,
Չի ոստք արմատոյ վերայ հաստատին.

Իսկ եթէ արմատ ծառոյն հատանի,
Ծառը մէկ մեղմ հողմով կանկանի.

Ինչ արքայ նեղութիւն կտայ ռամկաց,
Իմացէք ինքն իրան արմատը խլեաց։

Անձրևը զոր տայ ամպ գարնանային,
Նա նշան է բարի գործոց արքային.

Եթէ միտք Արքայի առ չարն հակին,
Օդը շիթ ջուր չի տալ հողոյ գնդակին.

Թէ անաչառ է և բարեգործ Արքայն,
Աշխարհի գանձերին կարժէ նա միայն.

Արքայք Աստուծոյ ստուեր են Սէյեադ,
Իրանք միշտ բարի են պաշտօնեայքն են վատ։

* *
*

Ի Էջմածնի Սէյեատէ առ Հոգոնին Հայոց Աշխարհի:

Ի 18$\frac{29}{3}$61 Թամախի:

Դու սուրհանդակ ճշմարտաբան Հայոց կռունկն,
Կամիմ խօսել ընդ քեզ դարձո առիս քոյ զունկն:

Զի հայելով տօթոյ ամռան և ցրտոյ ձմռան,
Եւ այն ամեն արգելանաց որք յԱշխարհի կան,
Երկու ամ է ծառայում ես ազգիդ ժրաջան,
Արդեօք գիտէ՞ գինդ երախտամոռ Հայաստան,
Թէ՝ ի զուր ես մաշում խեղճ քոյ թևն ու եղունգն:
Դու սուրհանդակ և այլն:

Հայաստանի աշխոյժն է կարի վաղանցիկ,
Նա մէկ բանիւ չ՝ի զբաղիլ համբերելով ձիգ,
Վատնել է նա բան չէ մնացել՝ ի նմա գեղեցիկ,
Զի ատելութեան նորա է սուր և թափանցիկ,
Նորա նման վաղաթարշամ է գարնան սունկն:
Դու սուրհանդակն և այլն:

Հայաստան շատ ունէր քոյ պէս արի կռունկներ,
Որք ունէին առ նա թանդ և անխզելի սէր,
Եւ կառուցին ի նմա անթիւ վաժարանք, վանքեր,
Իսկ նա նոցա Ջանքն ուրացաւ զեդ վատ ատնուտէր,
Եւ նոքա դարձուցին առ նա իրանց կրունկն:
Դու սուրհանդակ և այլն:

Աստուած երկար կեանք տայ քեզ որ լաւ ես աշխատում,
Դեռ ևս մէկ Հայ չկայ որ լինի քեզ ատում,
Այլ օրագիրք միմեանցից են յաւէտ գանգատում,
Քոյ հեզ բարքդ տեսանողքը նրանց են նախատում,
Զի նոքա հին ամեայ են իսկ դու նորատունկն:
Դու սուրհանդակ և այլն:

Քոյ Սէյեադն եմ քաղցրութեամբ առ դու իմ ողջոյնն,
Ազգի ցաւից սպրտնել ա երեսիս գոյնն,
Մեր ազգի պէս ոչ Թուրքն ունի նախանձ ոչ Յոյնն,
Միայն մեք եմք միմեանց վերայ ածում մեր թոյնն,
Բայց դու մէկ աչօք նայիր մեզ պագեմ քոյ ծունկն:
Դու սուրհանդակ և այլն:

*
* *

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ.

Պատկերն այն—հրեշտակական,
Զոր ունէր Յովսէփ, ատուգիւ,
Իմացայ չ՝ի մնալ Զիւլէյխան՝(*)
Ընդ ամօթանաց ծածկուլթիւ:

Բանաստ. Հաֆիզ Շիրազցւոյն:

Թարգմ. Սէյեատի:

(*) Զիւլէյխայ, էր կին Եգիպտացւոյն, որ ըստ աստուածաշնչի առվացաւ սիրով գեղեցկին Յովսէփայ, զոր պատմութիւնք մահմետականաց Զիւլէյխայ կոչեն:

Ա Ռ Ա Կ.

Ի՛ Կարս՝ Ի՛ Մուշ 18$\frac{5}{4}$61

Յաւուր միում՝ կատուն պատահեց մրկան՝
Ասեց բարեաւ՝ տեսի ես քեզ հոգի ջան.
Քոյ պատկերդ՝ իմ սրտումս տպուած է,
Սէր բառը մեզի վերուստէ տուած է,
Տեսոյդ կարօտ եմ շատ երկար միջոց է,
Կարօտիցդ խիղճ թոքիս մէջը խոց է,
Դիշեր ցերեկ՝ մտքիցս դուրս չես գալիս,
Անդադար քոյ՝ սուրբ սէրդ եմ զգալիս,
Ո՛հ թէ որքան՝ կը լինէի բաղդաւոր՝
Տարէնը մէկ՝ միտքդ ընկնէի թէ որ,
Մ՛էթէ դու չես՝ իմանում քաղցրիկ որդի՛,
Որ ես չունիմ՝ հասարակ կատուի մորթի,
Ես եմ նրանց՝ հոգևորաց գլուխն,
Էն մասին եմ՝ հագել զգեստի թուխն,
Որին ուզեմ՝ յայտնի պատուոյ տէր կանեմ,
Որին սարկաւագ որին տէր տէր կանեմ,
Ում կամենամ՝ կըյանձնեմ ծուխ, ժողովուրդ,
Վասնորոյ քեզ՝ կտամ շահաւէտ խորհուրդ,
Որ քանի ես՝ չեմ մեռեալ կենդանի եմ,
Եւ ձեր ազգի՝ հետ այս չափ ընտանի եմ,
Աստիճան առ՝ եղիր հոգևորական,
Որ չի մնամ՝ ձեր մօտին ես պարտական,
Այնուհետև՝ հորից դուրս կըգայ հացդ,
Մկունք ոնց են՝ կարող հայել դիմացդ,
Ամենեքեան՝ կուլինեն ծառադ գերիդ,

Խոնարհութեամբ՝ համբոյր կ՛տան ձեռներիդ,
Փառք Աստուծոյ՝ չունիս դու մէկ պակաս բան,
Որ այն մասին՝ մկունքը վերադ խնդան,
Զայնդ պարակ ատամդ ասեղից սուր,
Աչունքդ միշտ՝ պսպղումեն իբրև հուր,
Ականջներդ՝ կոլորակ են, շորդ սև,
Մարմնով փոքրիկ՝ որ պիտի լինիս թեթև.
Թէ և ունիս՝ որկրամոլութեան նշան,
Որկրամոլ է ամեն հոգևորական,
Ահա՛ ես զիս՝ կարող եմ քեզ նշան տալ,
Աշխարհ ուտեմ չեմ կարենալ կշտանալ,
Թէ արարածք՝ համայն կոխեմ որկորս՝
Յատուկ իմա՛՝ որ չի յագիլ իմ փորս.
Որկրամոլութիւնը չէ ընտիր արատ,
Մէկ կերպիւ նա է ագահներին խրատ.
Լաւ տեսնումենք՝ բանական ստեղծուածն,
Որ նրան է խոնարհ լուսինից ցածն,
Էլի նորա՝ աչքը սովածէ յաւէտ՝
Մանաւանդ զի՝ նա գիտուն է մեք տգէտ,
Եթէ նորա մեզքն ներում է Տէրն,
Յայտնի է որ պիտի ներէ և մերն,
Յորում շատ է տուել կպահանջէ շատ՝
Մարդը ամբողջ արարած է մեք կիսատ.
Արի՛ արի՛ պաչեմ սև սև աչքերդ,
Դու լեր որդիս ես քոյ հոգևոր հերդ։

Մուկն նրան երկրպագեց 'ի հեռուստ,
Խեղճի սիրտը դողդողում էր 'ի ներքուստ,
Ասաց գիտեմ ո՛վ իմ վեհ հայր բարերար,
Որ դու յայտնի իմ լաւ օրիս ես յօժար,
Ես ո՞նց կարեմ լինիլ հոգևորական,
Չի ո՛չ քերական եմ, և ո՛չ ճարտասան,
Դիցուք թէ դու շնորհեցիր ինձ զաստիճան.
Ես ո՞նց յանձն առնեմ որ եմ անարժան,
Գուցէ թէ մէկ օր պատահի մէկ օրէնք,
Մեք ինչպէս կատարենք, որ բան չի գիտենք,
Այդ քան գուրթ որ ինձ վերայ ունիք բաւ է,
Ինձ համար դա բիւր աստիճանից լաւ է,
Երջանիկ եմ զի ունիմ քեզ պէս ողորմած,
Քեզ ինձ համար երկար կեանք շնորհէ Աստուած։

Կատուն զգաց մկան զգուշութիւնն,
Որ տուել էր ծայրագոյն բնութիւնն,
Ասաց որդի՛ մի՛թէ տխմար ես, յիմար,
Որ ես հոգւով ցանկանումեմ քեզ համար—
Փառք, պատիւ և մշտական հարուստ, ապրուստ,
Ֆելօն, գաւազան և ոսկեհուռ հագուստ,
Դու կամում ես ձգել քեզանից 'ի բաց,
Ո՛չ փառք ունենալ ո՛չ պատիւ և ո՛չ հաց,
Դու թէպէտ չես քերական կամ ճարտասան,
Միմիայն ես քեզ համարումեմ արժան,
Հոգևորին չէ պիտոյ գիտութիւնն,
Նրան բաւական է բարի բնութիւնն.
Ինչ հոգևոր է բարունի կարդացող,
Կամ անատուած կուլինի, կամ հերձուածող.

Հոգևորի լաւն է անուստումն,
Որ նորաձև բան չի ծնանիլ գլխումն,
Սմեն վատ գործ դուրս կուգայ գիտնականից.
Յանցաւորքը երկիւղ ունին ինձանից,
Ես որ լինիմ քեզ վերայ միշտ հովանի,
Ով է կարող քեզանից գանգատ անի,
Վիճակումս ես միայն ինքնիշխան եմ.
„Բակլան իմս է կխաշեմ և կըցանեմ,“
Ասա՛ տեսնեմ ձեր գիւղը քանի տուն է,
Չի պիտի քեզ ժողովուրդը ընդունէ,
Թէ մեք սրան ընտրումենք հոգևոր,
Եւ պիտումէ պատուենք զնա նման հօր.
Գնա՛ շուտով բեր ինձ մօտ գիւղականքը,
Ջամենեսեան թէ ռամիկ թէ իշխանքը,
Որ ես նրանց սորա մասին հարցնեմ,
Գուցէ թէ քոյ պարտքերիցդ պրծնեմ։

Մուկն ասաց ի՞նչ թէ ժողովուրդը՝
Չի հասկանայ քոյ բարերար խորհուրդը,
Եւ չուզենայ յերկիւղից քոյ մօտդ գալ,
Վասն զի նա սովրել է դատարկ խօսալ՝
Թէ միմիայն կատուի բերանի քամին՝
Է մկների արիւնարբու թշնամին.
Թէ և ես իմ կենաց մէջ կատուներից՝
Մէկ վատութիւն չեմ տեսած բացի սերից,
Ինչ ժամանակ ինձ պատահել է կատուն՝
Ծիծաղել է մատաղ լինիմ աչքերուն,
Աչքով ունքով կանչել է զիս իւր մօտն.
Երեք վերսից իմացել է իմ հոտն,

Ուզել է միշտ ինձ անկեղծ սէր ցուցանել՝
Ո՛չ թէ թշնամւոյ պէս երկեցուցանել,
Մի միայն մեր ազգի յիմար երկիւղն,
Մահագեղ է կարծում ձեր ազգի իւղն,
Միով բանիւ մեր սնապաշտ մկներն,
Չի հասկացան կատուաց անկեղծ սէրն.
Գիւղականքը թէ որ չկան ի՞նչ անեմ,
Ես նրանց մօտ մէկ տնանկ գիւղական եմ,
Նոքա ունին հարստութիւն և որդիք,
Իսկ իմ բացի միոյ կնոջէ այլ բան չիք.
Թէ և ունիմ ես քանի հատ ազգական,
Նոքա էլ չեն սրտացաւ կամ օգնական,
Եթէ նրանց էլ ես ձեր մօտ հրաւիրեմ,
Չիս կպատժեն այս քանը յայտնի գիտեմ։

Կատուն ասաց դու յայտնիր իմ պատուէրս,
Սրբազնագոյն պաշտօնս և սուրբ սէրս,
Երդմամբ ասա՛ նրանց զի եմ բարեգործ,
Թէ չեն հաւատում կարող են առնել փորձ.
Երբ որ տեսար քոյ խօսքովդ չեն գալիս,
Դու միմիայն կնիկդ ա՛ռ եկ առիս,
Քեզ կշինեմ առանց նրանց քահանայ,
Ժողովուրդը յայնժամ կհասկանայ,
Երբ դու նրանց կուտես պանիրն ու եղն,
Վա՛յ կտայ գլխին կիմանայ իւր մեղն,
Եթէ բան է չի տան տասանորդ, մատաղ,
Դու էլ նրանց կարող ես թողուլ անթաղ,
Նրանց կտամ յաւիտենական գերի,
Կինդ կլինի մեծ տիրուհի մկների։

Մուկը կատուին գլուխ իջոյց դարձաւ տուն,
Յայտնեց կատուի խրատները մկներուն,
Նոքա էլ ժողովուեցան խորհուրդ արան,
Որ էր անպոչ մկան մեծ քարվանսարան,
Որպէս կարգն էր ըստ մկների օրինաց,
Նստոտեցին մէկ մէկից բարձր կամ ցած,
Քանի բոպէ մնացին մկները լուռ,
Քարվանսարան ունէր մէկ փոքրիկ դուռ,
Նրան փակեցին 'ի ներքուստ մկները՝
Չէին գիտում որ մեր հոգևոր տէրը՝
Պատրաստվել է քարվանսարի շէմքումն,
Եւ սէրուրթեան նշան չկայ դէմքումն,
Քանզի անպոչ մուկն էր մկանց իշխանն՝
Ա.հա՛ այսպէս ըսկսեց իրան բանն.
„Ասաց եղբարք ո՞նց էք հաւատում չարին,
Թէ նա ստոյգ ցանկանում է մեր բարին,
Մեր մշտական թշնամին է վատ կատուն,
Մեզ որսալոյ համար չունի երբեք քուն.
Նմա ի՞նչ փոյթ է թէ մեք չունիմք տէր տէր,
Կամ թէ անթաղ կարեն մնալ մեռեալք մեր.
Կատուն գիտենք որ է գիշատող գազան,
Ո՞նց հաւատանք թէ եղել է Սրբազան,
Ասենք թէ նա զգեցեալ է հանդերձ թուխ,
Դևին էլ են սև քաշում որպէս ածուխ,
Նա անպաճառ կամենում է մեզ խափել՝
Ձգել յորոգայթ յետոյ փշրել, լափել,
Ես կատուին չեմ հաւատալ մինչ ցմահ,
Կամումէք դուք հաւատացէք թէ ունիք շահ։“

Անպոչը զայս խորհուրդն ասաց վերկացան,
Մկունք նորա խօսքերիցը զոհացան,
Սկսեցին կարգաւ դռնից ելանել,
Կատուն էլ սկսեց մէկ մէկ կլանել.
Չէ հարկաւոր առակի միտքը բանալ,
Ամեն արթուն մարդ կարող է հասկանալ՝
Մկնին Աստուած էնտուր ստեղծեց յիմար՝
Որ կերակուր լինի նա կատուի համար.
Ասա՛ մեղքը որանց որինն է Սէյեա՛դ։
Մուկնինն է որ կատուին ընծայեց հաւատ։

*
* *

ԽՐԱՏ.

Եթէ մարդը միշտ յաշխարհի միջին շրջէ հեզ և ցած՝
Հաւատայ որ նա ցվերջը կենաց չի մնալ քաղցած։
,, ՍԷՅԵԱԴ ''

ՍՈՒՐ ԽՕՍՔ.

18$\frac{13}{4}$61.

Արարածք անբանք միշտ տան զպտուղ իւրեանց զանազան,
Սակայն բանականք պարտ են ծնանիլ գործ ամենարժան,
Քանզի առաջինք ՝ի յետնոց բարի վիճակ ստանան,
Բայց յետինք միայն բարեպտղութեան իրաւունք գտան.
Ինչ մարդ որ չունի կամք կատարելոյ վերնականն բան,
Նա չէ մարդ այլ է ՝ի վերայ երկրի մէկ կոճղ անպիտան.

Որ ծեր որ չունի ըստ իւր հասակին նշոյլ գիտութեան,
Նա է դրութեամբ իսկ և իսկ մէկ չոր աղբիւրի նշան.
Ինչ երիտասարդ որ ծանօթութիւն չունի ընդ ուսման,
Նա է ուղղակի յայսմ աշխարհի անվարդ բուրաստան.
Որ գիտուն չունի զտեղեկութիւն քաղաքավարութեան,
Նա է իսկ պատկեր ՝ի վաղուց յետէ կուրացեալ ական.
Ինչ հոգևոր որ չ՝գիտէ զգին թանգ ժուժկալութեան,
Նա է անսանձ ձի որ է անյարմար անդրադարձութեան.
Որ մեծատուն որ չ՝ունի զնշան բարեգործութեան,
Նա է ծառն այն որ ո՛չ տայ պտուղ իւր ՝ի յԱմարան.
Ինչ գեղեցիկ որ չ՝ունի ՝ի դէմս զամօթ գովական,
Նա է կերակուր առանց աղ, անհամ, անախորժական,
Որ Արքայ չունի անաչառութիւն զարդար դատաստան,
Նա է իսկ և իսկ Ամարային չոր ամպերի նման.
Ինչ Աշխարհակալ որ չունի իւր մէջ արմատ գթութեան,
Նա ոչ այլ ինչէ թէ ոչ մէկ առանց փող վաճառական.
Դու այս գանձերից զուրկ ես գլխովին Սէյեադ Մատաթեան,
Առանց որոց չես կարող մարդ կոչիլ միշտ և յաւիտեան։

*
* *

ՅԱՆԿԱՐՁԱԾԻՆ ԲԱՆ.

Արքա՛յք մի՛ լինիք նման Արծուոց անչափ սրընթաց,
Իրրև որձ Առիւծ ծանրաքայլ լերո՛ւք, վեհանձն, գթած։
„ ՍԷՅԵԱԴ։“

Գոգեն Ազգայ Հայոց 'Ի Պոլիս ամ ազգն Հայոց: 18$\frac{16}{4}$61

Ես միամիտ դուք նենգամիտ՝
Մատնեցիք զիս Յունաց կայսեր.
Զարն ձեզ իւր ընկեր եգիտ,
Հայաստանը մնաց անտէր:

Դուք մարմնով և արեամբ Փրկչին՝
Ուխտ եդիք և եղէք դրժող,
Անին էր ձեր գանձն վերջին,
Ետուք այլոց գլխներիդ հող:

Դուք չէք արժանի սուրբ լերին,(*)
Զի նենգութեամբ երդուայք ընդիս.
Եղէ ես թշնամեաց գերին,
Որոյ պատճառն էր Վեստ Սարգիս:

Ո՛հ թէ որչափ են բազմաթիւ՝
Յազգի իմում Վեստ Սարգիսներ,
Որք չարութեան են իսկ անիւ,
Ո՛չ թէ կաթոգին ազգասէր:

Ես էի յետին շառաւիղ՝
Երախտաւոր Բագրատունեաց.
Դուք չնչեցիք զազգիս շաւիղ,
Որպէս և տանն Արշակունեաց:(**)

(*) Ըստ Դաւթեան բանին որ ասէ. ,,ո՞վ ելցէ 'ի լեառն Տէառն։ Պատասխանէ.,, Նա որ ոչ երդուաւ ընդ ընկերի խրտում նենգութեամբ։,,

(**) Տրդատայ մահատեղով մահանալն կամի յիշել։

Սա չէ բնութիւն այլ մեծ պատիժ,
Ի վերուստ է տուեալ Հայոց,
Է կոյր աչաց զազրալի բիժ,
Կամ մահաբեր դժնդակ խոց:

Ինչ շիջաւ ջահ ձեր ով Հայք,
Այսուհետև կ'մնայք անլոյս,
Չէք տեսանել դուք զանշարժ կայք,
Զի չիք 'ի ձեզ հաւատ, սէր, յոյս:

Աստուած տեսանէ զիս և ձեզ,
Նա դատեսցէ մեզ ըստ գործոց.
Շունչ ձեր է իսկ հուր մարդակէզ,
Եւ մարմին ձեր է հրոյ հնոց:

Սէյեադ միթէ չէս լքանում,
Ազգիդ վատ վարքն պատմելով,
Ո՞ր ընթերցող չէ թքանում,
Նրանից միշտ գանգատվելով:

*
* *

ՁԱՅՆ ՍԷՅԵԱԴԻ

Ը֊ ենդասանէրորդ տարի փրկչական թուոյ և արշակունեաց յԵրանոյն։

18$\frac{17}{4}$61 Համախի։

ՍԷՅԵԱԴ։

Ո՛վ ինն տասներորդ զառամ դար,
Վրդովեալ սրտիս տուր մէկ դադար,
Արդեօք մարմնով թէ խելքով ես տկար,
Որ գործերդ են մի՛մեանց անյարմար.
Հին դարքն էին ճշմարիտ, արդար,
Անաչառ, անկեղծ, իսկ դու ես վատթար,
Քոյ մէջ չեմ տեսնում սուրբ Ֆիլօն, վեղար,
Անշահ բարեկամ ամբիծ կառավար.
Քեզանում ո՛չ դաշտ, ո՛չ ձոր, ո՛չ փապար,
Զուտին նախնական հոգեզմայլ նկար,
Պտուղք գոյութեան է խորշակահար,
Չի չես կարենում տալ նրանց կատար.
Ո՛չ մարդ, ո՛չ թռչուն, ո՛չ բոյս, ո՛չ տաւար,
Իրանց վիճակին չեն երբէք յօժար.
Կարճն ասեմ չ՛կայ այնպէս ստեղծուած,
Որ նա ունենայ հաստատ ստացուած։

Նա որ գործ ձեռաց էր իւր Արարչին,
Խաբեցաւ չարէն պատճառն էր կին,
Ձգտեալ Աստուծոյ բարձր վիճակին,
Մնաց դժնդակ անիծից տակին.

Նրանց դրախտից արտաքս հանին,
Ադամ ողբալով առեալ զընտանին,
Եթող կենսաբեր ծառն Ադենին,
Որդիքն ի նիւթոց արարին բագին,
Փոխան Արարչին նմա երկիրպագին,
Սատանան զմայլեալ նոցա տեսակին,
Զոմանս հասոյց մարգարտեայ թագին,
Զոմանս լուանոյն և արեգակին.
Մարդը քնուրթեան և սուրբ հեղինակին,
Հաւասար արար նորա ներհակին,
Այսու ամենայնիւ մարդասէրն Աստուած,
Կոչուեց մարդկային ազգին ողորմած։

Բազում քաղաքներ այրեցան հրով,
Շատունք սևացան մեղսական կերպով,
Ոմանք քանդեցին զերկիրներ սրով,
Իսկ ոմանք թղթով փետրով և մրով,
Շատ գազանք ելին ոչխարի մորթով,
Գիշատել սկսան զմայր իւր որդւով,
Ճշմարիտ շաւիղ չի խնդրեց ոչով,
Տիեզերք համայն լցան չար գործով,
Մարդասէրն Աստուած ստրջացեալ էստով,
Ի պատիժ մեղաց առաքեաց մահ, սով,
Իսկ մարդը գոլով քարացեալ սրտով,
Ծառայեց դիւաց հոգւով և մարմնով,
Նոյ ի սուրբ տապան եմուտ սերնդով,
Աշխարհը լրիւ ծովացաւ ջրով,
Ոչինչ չի մնաց լուսնեակից ցած,
Բայց էլի հաշտեաց ընդ մարդոյ Աստուած։

Տիեզերք եղեն շնուրթեան առագաստ,
Մարդիք սովրեցին դժոխային իմաստ,
Ճշմարտուրթիւնը մնաց աննպաստ,
Շիւղ աչաց եղև զերանից յոյժ հաստ,
Մարդոյ ոչ օգնեաց ահ, երկիւղ և սաստ,
Կամիմ պարզապէս խօսել փոքր ինչ ասա,
Որ լինի խօսքիս ապացոյց և փաստ,
Մեղքը ծով, մեք նաւ, հոգին մէկ նաւաստ,
Դժոխոց եզերաց մերձեցաւ մէր լաստ,
Նաւը ջախջախէր նաւաստն անզգաստ,
Երկար ծովեցինք արարինք շատ դաստ, (*)
Հոգի սէր շունչ մի չեղև մեզ ռաստ, (**)
Մարմինը տան տէր հոգին հիւր նուաստ,
Չկարաց սաստել թէ ընչո՞ւ ես մաստ, (***)
Մատնեաց զարարիչն մարդն անիծած,
Չեղև ի սրտէ նորին մոռացուած։

Անցին շատ տարեր շատ ժամանակներ,
Զանազան անցքեր գոյն զգոյն ազգեր,
Հզօր ալիքներ գոռ պատերազմներ,
Խոնարհ աղքատներ հպարտ հարուստներ,
Ողջախոհ տղայք բղջախոհ ծերեր,
Բարեգործ գողեր չար ճգնաւորներ,
Համեստ աղջկունք անզգամ հարսներ,
Անկիրթ հոգևորք կոշտ մարմնաւորներ,

(*) Ղաստ. ջանք ասել է։

(**) Ռաստ. պատահումն ասել է։

(***) Մաստ. թմրեալ յարբեցութենէ ասել է։

Մեծ նահատակներ հրաշագործ սուրբեր,
Մարդկային մարմնում լուսոյ զաւակներ,
Մատնուրթեան համբոյր կեղծուպատիր սէր
Անարժան գործիք հերձուածոց գրքեր,
Զայս ամեն տեսեալ Արարիչն մեր,
Չ՚ընկեաց յինքենէ զանուն մարդասէր,
Այժմ չգիտեմ ընդէ՞ր է Աստուած,
Մարդկային ազգի վերայ բարկացած։

Դու ծաղկեալ իննտասաներրորդ դար,
Հին դարքը քոյ մօտ էին մէկ խաւար,
Հրեշտակաց այժմեան մարդն է հաւասար,
Նախնի իմաստունք են այժմ յիմար,
Ի հնումն էլ գոյր աժմ էլ գոյ չար,
Քանզի մարդ չարին է ընուրթեամբ յօժար,
Ասա՛ էր յայնժամ ցաւք ունէին ճար,
Իսկ այժմեան ցաւոց չիք երբեք հնար,
Աստուած զառաջինս հովուէր զեղ ոչխար
Այժմեան ոչխարաց չէ լինում սատար,
Փորձանաց մէջ են տքնում անդադար,
Մարդոյն ոսոխ են եղել հող, ջուր, քար,
Ասա՛ մէկ տեսնեմ ո՞վ է սրան պատճառ,
Մարդն է չար թէ դու ես անպտղուրթեան դար,
Չի ողորմուրթեան աղբիւրը լցուած,
Մարդը շրջում է պասքեալ ծարաւած։

ԻՆՆՏԱՍԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՐ.

Աչեա՛դ մի՞թէ դու չունիս խղճմտանք,
Որ տալիս ես իմ խոց սրտիս տանջանք,
Ո՞ր դարնէ ցուցել մարդոյ իմ չափ ջանք,
Անյայտ մնացեալ գիտութեանց նշանք,
Անթիւ արծաթի ոսկոյ հարուստ հանք։
Ցնծութեան աւուրք ազատութեան կեանք,
Հաստատ գահ փայլուն թագ և հանգամանք,
Կանոնք, իրաւունք, օրէնք դատաստանք,
Մի՞թէ արժան եմ կրել ստգտանք,
Պարուրանք, բամբասանք, տրտունջ, անարգանք,
Օտարի բերնից սրանց շատ լուանք,
Քեզանից լսելն է թվում ինձ զարմանք,
Զի դու լաւ գիտես թէ ո՞րգոն են բանք,
Ընչո՞ւ պիտես տալ դու ինձ երեսանք,
Քանզի հին աւուրց մարդ ես բան տեսած.
Հին ամեայ ծերը չէ իմաստնից ցած։

Թէ աշակերտ ես Աստուծոյ բանին,
Պիտի հաւատաս աւետարանին,
Որ ասէ ցգալ օր դատաստանին,
Մարդը կը մտնի ՝ի ձեւ սատանին,
Հաւատ, յոյս, և սէր փառքից կ՚անկանին,
Այն է սիրելի՝ յաչս գազանին,
Հոգին կ՚բաշխէ խաւար իշխանին,
Զի մերձ է բնութեամբ կորստականին.
Պիտի տարածի խորհուրդ խորանին,
Որ լցցի գիրը Վախճանականին,

Տեսիք զհակումն թիւր բանականին,
Որ եցոյց զգալուստ դժոխականին,
Զէ նման նախնեաց այժմեան պատանին,
Ուղիղ բառ չ՚կայ նորա բերանին,
Նախընթաց ազանց մեղքն էր ծածկուած,
Այժմեայն մեղք յայտնի երկինք համբարձուած։

Այժմեան մարդն է հրեշ ընութեան,
Հրճուանք ստութեան ողբ ճշմարտութեան,
Ի ձեռն ծանր երգմնազանցութեան,
Ելին ՝ի խնդիր զանազան կոչման,
Տիւլգարը (1) եգիտ փառք իշխանական,
Սաբունչին(2) եղև գլուխ գանձատան,
Նալբանդը (3) էառ պաշտօն, զաստիճան,
Զարդարը (4) արար մարդկանց դատաստան,
Տամուրչին(5) վարէ գործ քաղաքական,
Բաշմաղչին(6) կրէ ազնուի նշան,
Բաղկալը (7) դարձաւ մեծ խորհրդական,
Դալլաքը (8) կոչուեց իշխանի թարգման,
Անհամար մարդիք գոն սոցա նման,
Միայն աստ սակաւք յանուանէ յիշեցան,(*)

(1) Տիւլգարը Թուրքերէն հիւսն ասել է։
(2) Սաբունչին — օճառաւաճառն է։
(3) Նալբանդը Փարսերէն ձիանալնողն է։
(4) Զարդարը — ոսկերիչն է։
(5) Տամուրչին Թուրքերէն դարբինն է։
(6) Բաշմաղչին — կոշկակարն է։
(7) Բաղկալն — մերդ վաճառողն է։
(8) Դալլաքը արաբերէն սափրիչն է։

(*) Սոքա ամենեքեան են ՝ի Շամախի։

Այժմեան մարդը չէ մարդ այլ մարդախած,
Էնդուր է նրան Տէրն աչքից ձգած։

Այժմեան մարդիք են անմիտ երեխայք,
Միմեանց ստութեան ուղղիչք և վկայք,
Ոմանց պատուռիթ լինին նուրբ տղայք,
Ոմանց նազելի հրաշագեղ կանայք,
Սոքա են այժմեան թանգագին ընծայք,
Փառաց հասնելոյ պատճառք աներկբայք,
Չէն գոված զի չէին տեղեակ հին Մուզայք,
Զանյայտս պատմեն միմիայն հմայք.
Կաշառակեր են համայն պաշտօնեայք,
Որոց սիրական ժամանակն է ցայգ,
Վասն զի զխաւար սիրեն շուն փեսայք,
Խղճից վաղ ասին թէ „բարեաւ մնայք,“
Սոյնպիսի գործոց պտուղ են վիշտք վայք,
Մեղաց չէք փրկվիլ եթէ միշտ չ'լայք,
Փրկչի ճակատն է ձեզանով տրտմած,
Զի նա ձեր սիրով է մարմին զգեցած։

Տեսէր որ մարդն է վատ և ոչ թէ ես,
Հին մարդը ամբողջ մարդ էր նորը կէս,
Ո՛չ ամօթ գոյ ո՛չ պատկառանք ո՛չ ծէս,
Չ'գիտէ Դաւիթ ո՞վ էր կամ Մովսէս,
Սրարիչն մեր է ամենատես,
Կ'տեսնի գործդ հազար թագցնես,
Անարժան մարդն է յաւէտ սև երես,
Շատ բան կը տեսնես եթէ համբերես,
Փութով չլինել ասես թէ ծեր ես,

Մէկ խորհուրդ կ'տամ թէ ծածուկ պահես,
Անուանդ դրամ է աշխարհ աւերես,
Մարդից չի մնալ նիւթ եթէ այրես,
Ես չեմ թզենին չոր այլ նա „ներես,“
Նորա սիրտն է լի պղծութեամբ պէս պէս,
Մարմինը գեհեան է մեղօք վառուած,
Սէյեա՛դ դու մարդից մի՛ լեր անկասկած։

* * *

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ.

18$\frac{18}{4}$61

Ինչ մարդ չունի սէր նա չունի հաւատ,
Անհաւատ մարդոյ յոյսն է անհաստատ,
Անհաստատ յուսոյ վախճանն է ունայն,
Ընդէմ է նմա ճշմարտութեան ձայն.
Ճշմարտութիւնն է անուն Աստուծոյ,
Ճշմարտութիւնն է սիւն արդար հոգւոյ,
Մարդ լաւ ճանաչէր չարդ և բարիդ,
Գուն գործեա՛ որ քեզ կոչեն ճշմարիտ.
Ինչ մարդ արբանեակ է ճշմարտութեան,
Նրան կուլինի զանազան նշան.
Նախ գոյ 'ի նմա արդար խղճմտանք,
Անշաղախ ընթացք անշամանդաղ կեանք,
Սիրտ խաղաղասէր հեզ և մարդասէր,
Առաքինութեան կենդանի պատկեր,
Հարազատ ծառայ աւետարանի,
Զի որոնել նա տիտղոս անուանի,

Պատուից կը փախնու իբրև իժ օձից,
Աշխարհի փառաց չէ նա մասնակից։

Երկրորդ կը լինի նա անյիշաչար,
Ծարաւելոց ջուր նեղելոց սատար,
Կունենայ լայն սիրտ և ձեռն առատ,
Կուսակրօն միտք բաղձանք անարատ,
Յաշխարհի գոլով յերկինս կ՚ըճեմէ,
Ճշմարիտ մարդը հաւատոյ վէմ է,
Որոյ օրինակ էր սուրբն Պետրոս,
Նրան վէմ կոչեց Փրկիչ մեր Քրիստոս։

Երրորդ նրան ոչ հզօր մամոնայն,
Ո՛չ գահ, գայիսոն, ոչ թագն ունայն,
Ո՛չ սլաք սիրոյ՝ ոչ գեղ նազելեաց,
Ո՛չ ծարաւ ջրոյ ոչ քաղց ուտելեաց,
Ո՛չ փայլուն հանդերձ ոչ դափնեայ պսակ,
Ո՛չ աստեղուութեան լուսին արեգակ,
Ո՛չ ակունք անգինք ոչ ոսկի, արծաթ,
Կարող են պատրել ճշմարտին, Սէյեադ։

*
* *

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ՄԱՐԻԱՄ.

18$\frac{19}{4}$61

Անշամանդաղ լոյս՝ անարատ սուրբ կոյս,
Բազմախրախոյս՝ մեծ սատար և յոյս,
Եդեմական բոյս՝ փրկութիւն մարմնոյս,
Փայլուն թագ գլխոյս՝ սրբութիւն հոգւոյս։

Ապոր ոսկեղէն՝ էակ լուսեղէն,
ՅԱդամայ ցեղէն՝ ընտրեալ յԱնեղէն,
Գոլով հողեղէն, կառօք հրեղէն,
Համբարձար իբրև՝ մասն Աստուածեղէն։

Ազնիւ խնկոյ ծառ՝ բրաբիոն պայծառ,
Դշխոյ մեծափառ՝ երկնային բարբառ,
Անպատմելի ճառ՝ աղօթից բուրվառ,
Կենսատու ամառ՝ փրկութեան պատճառ։

Դու Հայոց ազգին՝ հասո վիճակին,
Զոր վաղ կորուսին՝ կամաւ Արարչին,
Անզուգական կ՚ին՝ սուրբ Աստուածածին,
Օգնեա՛ դու քոյ հին ծառայ Սէյեա՛դ ին։

*
* *

ԳՈՎԱՍԱՆՔ ԳԵՂՈՅ.

Ըստ էջանուէն „ովքիմ ալալքան և ուամարամ ոանքան“ Տաճկերէն երգոյն։

Աննման գանձ է քոյ բարեաւ տալն,
Երջանկութիւն է դէմքդ տեսնալն,
Մեծ բաղդ է քոյ մօտ՝ միշտ գնալ գալն,
Բոլոր աշխարհին քոյ կարժէ ճուխտ—
Խալն։

Արդեօք գիտում ես՝ քոյ տեսոյդ գինն,
Դու առաջինն ես՝ հեղնէն յետինն,
Թէ բոբիկ շրջես՝ կայրես՝ գետինն,
Գետինն էլ գիտէ՝ քոյ նրան—
Խղճալն։

Լուսինն է ստուէր՝ պայծառ պատկերիդ,
Լուսնթագն է քոյ՝ անազատ գերիդ,
Ալմաստ մատանին՝ բիլօր մատներիդ,
Կարօտիւ կիզվելով՝ կորոյս—
Խնդալն։

Թէ թողուս լիզեմ՝ ծրծիդ մէջ տեղն,
Կուլինիմ մարգկանց՝ միջի անմեղն,
Լուսեղէն է քոյ՝ հրաշալի գեղն,
Որին ատեցիր դու սովրեց—
Ողբալն։

Ես հմուտ որսորդ՝ աղեղս պատրաստ,
Ինչ շահ որ քոյ պէս՝ որոնէ յոյժ զգաստ,
Մտօք յոյժ պարակ՝ մարմնով կարի հաստ,
Սէյեադն եմ էնդուր՝ չեմ կարում—
Որսալն։

*
* *

ՀԱՐԿԱԴՈՐ ԽՕՍՔ.

Լուայ ես յիմաստնոց՝ զայս բարի համբաւ,
Թէ Արքայի գանձուց՝ հպատակն է լաւ,
Վասն զի գանձն՝ կարէ վերջանալ,
Իսկ հպատակքը՝ կարեն միշտ գանձ տալ,
Եւ անշարժ մնալ։

„ՍԷՅԵԱԴ։“

ԲԱՂԷ։

18¹⁄₄61.

Բաղէն նստեալ մեծ անձանց կռներին,
Մեծամտել էր ցաստիճան վերին.
Մէկ օր նա տեսեալ իւր մէկ ընկերին,
Ասաց արի փառք տանք միայն տէրին։

Ասացին ով Տէր տուր մեզ կեանք երկար,
Ի մահ միւս թռչնոց սուր ճիրան և կար,
Չի մեք հզօր եմք նոքա ապիկար,
Ոնց որ գայլք տէր են հեզ ոչխարներին։

Ընչո՞ւ ստեղծեր նրանց ով ստեղծող,
Որք ոչ գիշատող են ոչ պատառող,
Անարդ արարածք են գլխներին հող,
Ո՞նց հասանեմք մեք չնչին հաւերին։

Որք միշտ քթուքթ են անում աղբոտ տեղ,
Իրանք այլանդակ, անշնորհք, տգեղ,
Նոցա ընակարան չէ քաղաք, այլ գեղ,
Զզուիմք նայելիս նոցա պատկերին,

Երկնից ձայն էկաս որ ասէր այսպէս,
„Բնութեամբ ագահէք մտօք կարճատես,
Ձեզ ահա մէկ կարճ նուրբ վճիռ տամ ես,
Որ դուք էլ պատմեք ձեր ստորներին։“

Դուք մինչ կենդան էք փառաւոր էք լաւ,
Երբ մեռայք դուք պիղծ դէշ էք, սուրբ հաւ,
Ձեզ յաղբիւս կրձգեն նրանց, 'ի փլաւ, (*)
Կրդնեն 'ի սեղան բանականներին։

Դուք օրինակ էք անդուրթ մեծատան,
Իսկ հաւք աղքատաց նման սովեալ կան,
Բայց երբ որ էհաս ժամանակ մահուան,
Նա դիւաց ընկեր է սա սուրբերին։

Սէյեա՛դ ինչ առակ որ խօսել ես ցարդ,
Տիփ անհոտ ծաղիկ են սա կարմիր վարդ.
Գրիչդ սուր է դու հմուտ կախարդ,
Սփոսս որ ընկեր ես յիմարներին։

*
* *

ԵՐԳ.

'Ի Գոյն Մաղրեբիայ պարոն։

Սկզբնական մեղաց,
Յորմէ ծնաւ լաց,
Զրաւումն կենաց,
Մարդն էր հեղինակ։

Պատրանօք չարին,
Կամ կամարարին,
Թողլոյ զբարին,
Նա էր ընդունակ.

Որով և կորոյս,
Զանազատն լոյս,
Հաւատ, սէր և յոյս,
Յոյժ տեսակ տեսակ.

Զի երջանկութեան,
Փառաց լրութեան,
Փայլուն դրութեան,
Է նա միշտ ներհակ.

Երբ անկան յաշխարհ
Այս ամենաչար,
Եղեն ապիկար,
'Ի պատիժ մեղաց։

Սակաւ առ սակաւ,
Կրելով վիշտ և ցաւ,
Զգ քաղց և ծարաւ,
Գտին չուր և զհաց.

Թողեալ զգ պատճառ
Գոյութեան անճառ,
Մնացին թշուառ,
'Ի ցանցս դիւաց.

Խզեցաւ յուսոյն թել
Ելին անարգել,
Որոնել զգ տէր,
Առեալ զգ ճրագ։

Արարիչն Աստուած,
Գոլով միշտ զթած,
Յաշխարհ առաքեաց,
Զորդին անդրանիկ։

Վասն փրկութեան,
Խղճալի ընութեան,
Կորուսեալ մարդկան
Տալ զիւր արդասիք.

Զի սէրն անսահման,
Գիտէր անխափան,
Թէ թարց իւր մահուան,
Այլ փրկութիւն չիք.

Ինչեալ մարմնացաւ,
'Ի մէնչ խաչեցաւ,
Մեռաւ և յարեաւ,
Ետ մեզ նոր վիճակ։

'Ի ժամ յարութեան,
Դժոխք սարսեցան,
Գերեալք փրկեցան,
Ըստ ձայնի գրոց.

Միայն այսքան չանք,
Զարչարանք, տանջանք,
Զեղեն ստգտանք,
Ադամայ որդւոց.

Աստուածն Սէյեա՛դիդ,
Գթած Սէյեա՛դիդ,
Տրտմած Սէյեա՛դիդ,
Ցոյց զգ կողիդ խոց.

Զի նա ըստ կարեաց,
Փախեալ 'ի չարեաց,
Մերձեցեալ բարեաց,
Առցէ կենաց թագ։

*
* *

(*) Փլաւ յայտնի կերակուր մի է Ասիացւոց, յորոց մէջն լինին միշտ եփեալ հաւք։

ՈՂԲ.

Ա՛մոն ողբեկ, յոյժ ողբեկուրշ յոյժ- երգեցէք:

Վա՛յ.
Ի՞նչ իլաւ մեր,
Ի՞նչ իլաւ մեր,
Ականակուռ գահն ու թագն:

Վա՛յ.
Ի՞նչ եղև որ,
Ի՞նչ եղև որ,
Խաւարեց մեր Արեկագն:

Վա՛յ.
Տիւ և գիշեր,
Տիւ և գիշեր,
Չ'ի պակասեց մեր ներհակն:

Վա՛յ.
Ո՞ւրէ մէկ ծեր,
Ո՞ւրէ մէկ ծեր,
Որ գուշակէ մեր վիճակն:

Վա՛յ.
Է՞ր կորուսեր,
Է՞ր կորուսեր,
Սէյեա՛դ քոյ լարած ջուրթակն:

*
* *

ՅՈՐԴՈՐԱԿ:

Այսպէս ողբով ով է կարող թմրած ազգին արթնացնել,
Նա նիրհելով կամի իւրեան կենաց օրը մ'թնացնել,
Քոյ ազազակդ մեռելոց լսելիքը խուլացրին,
Ազգը չի լսում կամելով չարութեան չափը լցնել:

*
* *

ՄՈՒԽԱՄԱԶ. (*)

18¾61.

Արդարադատ դատաւորը կորստեան թակարդ չի լինիլ.
Ազնուազարմը հեզ, խոնարհ կլինի հպարտ չի լինիլ.
Կապկին զարդարես ոսկեհուռ հանդերձիւ նա մարդ չի լինիլ.
Օրը հազար անգամ ջրես փշոյ ծառից վարդ չի լինիլ.
Մարդոյ զարդը բարքն ու վարքն է ճոխ զգեստից զարդ չի լինիլ.
Սրբոց հրաշքը երկնից է հրաշագործ կախարդ չի լինիլ:

Դատաւորը ամենաթանգ մարդ է աշխարհին հարկաւոր.
Առանց դատաւոր մարդն է որպէս երեխան առանց հօր.
Ձեռաց տակը լինողներին կպահպանէ նման եղբոր.
Ճանապարհից ելնողներին կլինի միշտ բարեյորդոր.
Դատաւորի օգնութիւնը հարկաւոր է ամենայն օր.
Միմիայն եթէ չունենայ աչք ագահ և արատաւոր.
Արդարադատ դատաւորը կորստեան թակարդ չի լինիլ:

(*) Աւաջի ատն իւրաքանչիւր տող եղեալ է վերջին տող միւս ատնց, վասնորոյ այն է պատճառն որ առաջի ատնն է վեց տող իսկ այլք եօթն:

Ինչ մարդ՝ի ժամ խօսակցութեան իրան գովեց երկար ու ձիգ.
Գոյն զգոյն հանդերձ զգեցաւ և ոսկեայ գօտի գեղեցիկ.
Գլխոյն դրաւ երկար գդակ ոտին հագաւ կարմիր մաշիկ.
Թէ Հայ լինի թէ Յոյն թէ Փռանգ թէ Պարսիկ լինի թէ Տաճիկ.
Պիտի գիտենաս էն մարդը ազնիւ չէ այլ իսկ գռեհիկ.
Նորա խօսքին մի՛ հաւատալ զի է զրաբան, խաբուսիկ.
Ազնուազարմը հեզ, խոնարհ կլինի հպարտ չի լինիլ։

Մարդոյն արարածոց միջին էնդուր կոչեցին բանական.
Զի ամենին Արարիչը իւր հրամանաւ յանձնեց նրան.
Նորա իրաւանց պատճառը սիրտնէ, և լեզուն ճարտասան,
Որովք կարենում է լինիլ նա իշխան, Զօրապետ, Սուլթան,
Եւ կատարել ըստ կարգին ծանր պաշտօն տնտեսական,
Պատկերը չէ այլ սոքա են մարդկան արտօնութեան նշան,
Կապկին զարդարես ոսկեհուռ հանդերձիւ նա մարդ չի լինիլ։

Ուսումնը անարժան մարդին կը շինէ անասուն-խօսուն,
Անագակութեամբ կվարվի չի հասկանալ փառք գերագուն,
Ուսմամբ թէ և լարախաղաց կարէ լինիլ ամեն մէյմուն,
Միայն անունը չի փոխվիլ չի ստանալ մարդոյ անուն,
Ճշմարիտ է զգայութեամբ զանազան են շունն ու կատուն,
Բայց վիճակաւ երկոքեանն էլ պատառող են ոչ թէ նկուն,
Օրը հազար անգամ ջրես փշոյ ծառից վարդ չի լինիլ։

Եթէ մարդիք մէկ սեակիր տեսած են ես տասն եմ տեսել.
Պատահել է որ ես աչօք իմովք նոցա դասն եմ տեսել,
Գուցէ այլք շահ լինին տեսեալ ես նրանց վնասն եմ տեսել,
Նոցա օրինօք վճռռած շատ հասն ու չհասն եմ տեսել.
Անպատիւ . . . . . ց ընծայած մարգարտեայ վակասն եմ տեսել,
Մեծ պահոց մէջ նրանք կերած ես թանէ սպասն եմ տեսել,
Մարդոյ զարդը բարքն ու վարքն է ճոխ զգեստից զարդ չի լինիլ։

Այժմեան մարդիքը գլխովին եղել են հմայ, աչքակապ.
Նոցա կեղծ արարմունքները ոչ քանակ ունին և ոչ չափ,
Թէ լաւ նկատես կ՝իմանաս որ նոքա են տիփ մարդախաբ,
Մարդկանց ծաղրածու գործերը թէ դեռ տեսնեն կզարնեն ծափ,
Ո՞ւրէ այժմ Սէյեա՛դ մէկ մարդ որ չլինի մեղսաշօշափ,
Որին որ երկու օր փորձես կտեսնաս որ չունի ինսաֆ,
Սրբոց հրաշքը երկնից է հրաշագործ կախարդ չի լինիլ։

***

ՑԱՆԿԱՐԾԱԾԻՆ ԽՕՍՔ.

Զատիկն է անշուշտ տօն շնորհաւոր,
Բայց ընկեր մահու է խորհրդաւոր,
Զի մարդը քանի Զատիկ տեսանէ,
Նա նորա կենաց զոստն հատանէ,
Մէկ էլ կտեսնի ցտօն Զատկական՝
Իրան կրդնեն մուրթն գերեզման։

„ՍԷՅԵԱԴ“

***

Բաղդն տուաւել ոչրէ ղաֆահս չան ղուտուայէնս։ $18\frac{22}{4}61$.

Լաւ են ասած թէ ամեն մարդ իրան նմանին կ՝ըսիրէ.
Երևի որ այս բնութիւնը՝ի բնէ Աստուածադիր է։

Յաւուր միում բաղդը գնաց մէկ իրան որոնողի մօտ.
Տեսաւ շեմքումը նստած է տխրադէմ զգեստը աղտոտ,
Ասաց քոյ օրիդ գթալով եկելեմ որ քեզ շատ փող տամ,
Բայց նախ քան զայն պիտումէ՝ որ ես բանի իսկն հասկանամ,

Թէ երբ դու փողը ստացար ի՞նչ կերպ կամիս նրան մսխել,
Վասն զի իմ կանոնս է այս բանի ստոյգն գիտել։

Անբաղդն ասաց ,,լսէր Աղա՛ քեզ իմ միտքս յայտնի բանամ,
„Երբ որ քոյ գթած ձեռիցդ սահմանեալ փողը ստանամ,
Նոյն ժամայն պէտք է շինեմ սրբատաշ քարերից տներ,
Մեր երկրի Տիրապետի դուստրը առնեմ, որ է պատկեր,
Տներս կըլեցնեմ ամենաթանգ զարդարանօք,
Որ մէջը մտնողները զարմացեալ հիանան նոքօք,
Այնուհետև կսկսեմ կեանքս անցուցանել ուրախ,
Ընդ երգչաց, և պարողաց ուտել, ըմպել, ննջել յաճախ,
Զգենուլ փայլուն հանդերձ և շրջիլ նման արքայի,
Անտանելի ցաւ լինիլ նրան, ով որ ինձ կը նայի.
Վարձել զանհամար ծառայս և զաղախնեայս զեղեցկանկար,
Երբեմն ելանել կառօք երբեմն նստել յերիվար։''

Բաղդը լուեալ զայսոսիկ անյատ եղև նա նոյն ժամայն,
Խեղճ անբաղդի գլխիցը խելքը թռաւ միանգամայն,
Յետոյ բաղդը ծանրաքայլ գնաց ի դուռը մեծատան,
Որ անչափ հարուստ էր բայց ուտէր չոր հաց և թրթու թան,
Ասաց նրան թէ կամիմ ես քոյ գանձդ երեքպատկել,
Եթէ դու մինչի մահդ կամենաս անկեղծ յարգել,
Ասա՛ տեսնեմ տուած գանձս ոնց պիտես դնել ի գործ,
Ասաց ,,Տէր իմ դու գիտես որ ես հմուտ եմ, չեմ անփորձ,
Փողը ես պահպանումեմ սանտուղի մէջ, հողոյ տակին,
Որ տեղը չեն իմանում ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ տանտիկին,
Ամսենը մին անգամ ես իմ ձեռօք նրան բանումեմ,
Մէկ մէկու կըպցնելով ձայնիցը ուրախանումեմ,
Յետոյ կրկին թաղումեմ նրան ես խաչակնքելով,
Գիշեր ցերեկ չեմ քնում նորա մասին մտածելով,

Տանս ծառայ չեմ պահում ես չեմ տեսնում մէկ հալաւ նոր,
Ընտանիքս միշտ սոված են լինում և համարեա՝ տկլոր,
Դդակիս մազը թափուած մաշիկիս տակը կարկատած,
Ուտելիքս բանճար է երբեմնապէս բոքի հոտած,
Երեխայքս այլոց տան միս տեսնալիս ճրկճրկում են,
Փող մսխող յիմարները այս մասին դէմքիս թքում են,
Բայց ես այն անմիտների գործը տեսեալ ծիծաղում եմ,
Չեմ լսում նոցա խօսքը իմ կանոնիւ զբաղվում եմ։''

Բաղդը լուեալ ազահի այս քաղցրահնչիւն խօսքերը,
Ասաց ես ի՛ յաւիտեան քեզնից չեմ կտրիլ իմ սէրը,
Գնա՛ դու այսուհետև փողի համար մի՛ մտմտալ,
Որ քան հարկաւոր լինի միամիտ լեր կարող եմ տալ,
Մնաս բարեաւ գնում եմ դու լաւ ես գիտում քոյ բանդ,
Բայց աշխատիր որ երբեք ճրագ էլ չի վառվի տանդ։

Ընթերցողք լաւ իմացէք ինչ մարդ որ անչափ փող ունի,
Էն փողի համար նա իւր սրտումը մահուան դող ունի,
Որ եթէ մէկ սև դրամ տա նա մեռելոց յիշատակ՝
Անպատճառ նա ինքը շոյտ կանկանի մեռելոյ վիճակ.
Սէյեա՛դ միշտ բամբասումես բաղդի գործերից էս տեսակ,
Սա է պատճառ, որ նա էլ ներգործում է միշտ քեզ ներհակ,

ՑԱՆԿԱՐԾԱԾԻՆ ԶՐՈՑՑ.

Անառակը ի՞նչ գիտէ բարի բարուց, վարուց գինը,
Նա որ միշտ փորձութեանց մէջ է ձգում իրան անձինը։
Ով որ չի կարում դնել իւր սեպհական իրաւանց գին,
Նա ո՞նց է կարող լինիլ վահան փրկանաց իւր ազգին։

,,ՍԷՅԵԱԴ.''

ԵՐԳ.

Ընտ Եղանակի Մաղուրկայ խաղոյ: 18$\frac{22}{4}$61.

Հոգին է իսկ լոյս, Թողուլ զբարին՝
Անապական կոյս, Հետևիլ չարին՝
Անջնջելի յոյս, Է անհնարին,
Մարդկան ընդհանուր, Եւ մահաբեր կիրք.

Մարմինը է վարդ, Լաւ նկատեցին,
Աշխարհային զարդ, Գնահատեցին,
Մահն է մէկ թակարդ Եւ մեզ պատմեցին,
Վատնէ զնա զուր. Սուրբ օրէնսդիրք.

Կեանքն է արեգակ, Ով որ չի լսէ՝
Խաւար տան ճրագ, Կամ ընդէմ խօսէ՝
Թէ իւղն է իստակ, Անշուշտ կափսոսէ՝
Կտայ լոյս մաքուր. Նա յօրէ ցաւուր,

Գործն է զանազան, Շուք երջանկութեան,
Լաւ կամ անպիտան, Հիմն փափկութեան,
Թէ լինի խոտան, Մարդկային բնութեան,
Կայրէ իբրև հուր: Է զազիր դժոխք.

Կայ գործ հոգևոր, Այս վատ վիճակին,
Գոյ և մարմնաւոր, Երկնքի տակին,
Ո՞րն է հարկաւոր, Շատ հաւանեցին,
Ցուցեալ են սուրբ գիրք. Սուրբ հոգւոյն ոսոխք.

Երկար ոխ պահողք, Որքան նա այլոց՝
Անչափ բարկացողք, Հասոյց վէրք և խոց՝
Կեղծիւ աղօթողք, Տիպ դարձին՛ ի ծոց՝-
Աւազակ են գողք. Իրան խեղճ որդւոց.

Ով վարի այսպէս, Հո տառն է հատ հատ,
Զունի բարի ծէս, Այիբը արատ,
Այն է իսկապէս, Ցին է յուսահատ,
Անշահ առուտուր: Իսկ պատկեր Հայոց.

Հայն էր առաջին, Նա ունէր նախթուր,
Այժմ է վերջին, Քաղաքներ ամուր,
Կամաւ Արարչին,- Այժմ, Սէյեան, լուր,
Ըստ իրան գործոց. Ունի փետուր, մուր:

***

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ

Ընտրեց Հարչարանաց շաբաթուն Դէզի պահոց: 18$\frac{22}{4}$61

Կիրակէն է օր յարութեան՝ մարմնացեալ բանին Աստուծոյ,
Կամ նախկին օր արարչութեան՝ և դատաստանին Աստուծոյ:

Երկուշաբթին է երկրորդ օր՝ ստեղծաբանութեան և դժբաղդ,
Այսօր մարդ ի՞նչ սկսանէ՝ չի կատարվիլ ըստ հնոց անխախտ:

Երեքշաբթին է օր երրորդ՝ ստեղծագործութեան և յաջող,
Տասն կուսանաց հինգն էին զգաստ, գիտուն, հինգն նիրհող:

Զորեքշաբթին է չորրորդ օր՝ արարչութեան և Յուդայի,
Տիրամատնութեան աղագաւ՝ առ Սոդոմ ևս կը նայի։

Հինգշաբթին է հինգերրորդ օր՝ արարչութեան և օր ընթրեաց,
Յորում փրկիչն աշխարհի՝ աշակերտաց զոտն լուաց։

Ուրբաթն է օր վեցերրորդ՝ ստեղծաբանութեան Սրարչին,
Եւ յիշատակ չարչարանաց՝ բանին և մահ ՝ի վերայ խաչին։

Շաբաթն է օր հանգստութեան՝ և ճրագալոյց մեծ Զատկին,
Զայս օր մինչ ցարդ ճիշտ պահպանէ՝ տիրասպան Իսրայէլն հին։

Սէյեադ գիտելով զօրութիւն սոյն աւուրց, միշտ եղիր զգաստ,
Զի մի յեզերաց դժոխոց՝ մերձենայցէ խեղճ հոգւոյդ լաստ։

* *

ԱԻԵՏԱՐԱՆ.

Անցեալն էանց՝ ներկայն է յայտնի՝ ապառնին մութն է,
Աւետարանին՝ ճիշտ ծառայելը՝ մարդոյ օգուտն է.
Նա է միմիայն մեր մահկանացուացս՝ եզական յոյսը,
Նովաւ կարեմք մեք ստանալ երկնից՝ անաղօտ լոյսն,
Ամեն խաչապաշտ կրել պիտի միշտ՝ նրան ծոցումը,
Զի ոչ թէ ծածկել զնա իբրև գանձ՝ խոր պահոցումը.
Թէ կամիմք ունիլ մեր սիրականին՝ առաջի աչաց,
Նրանից մեզ մերձ սիրական չունիմք՝ ահա՛ բաց։

„ՍԷՅԵԱԴ“

ԹԻՋՆԻՍ ՀԱՅԵՐԻՆ.

18$\frac{23}{4}$61 ՝ի Շամախի։

Աղտեղի աշխարհի՝ աղտն սրբելոյ՝
Կարգեցաւ ի՝ տեառնէ՝ Ջէ. ոյ. Հիւն. ըէ.
Անպատճառ կ՝ինչանէ՝ զայն նորոգելոյ՝
Յերկնից կիզանող՝ Հո. ոյ. Հիւն. ըէ։

Ջուր և հուր են իսկ՝ նիւթ մաքրողական,
Դինի և ցրքի հիւթ պատրոգական,
Վերջնով թմրի միշտ՝ խիղճ դատողական,
Մատուռակ թէ ունիս՝ տիւն. ոյ. Հիւն. ըէ,

Տուր դու այն բաժակը՝ որ ինքնաբեր,
Թէ չունիս դուցէ այլք՝ ունին գնա բեր,
Ըմպեմ և զարթնում՝ չասեն քնոտ էր,
Սրբեցութիւնն է մեծ՝ մէն. ոյ. Հիւն. ըէ։

Մուրը սևացոյց՝ շատ պայծառ երես,
Նա քեզ չի մերձենալ՝ մինչ հոգիդ չ՝երես,
Մարդ դու վատ մրոյն՝ սիրահար էր ես,
Նա յոյժ չար արատ է՝ լիւն. ոյ. Հիւն. ըէ։

Լուր դու Սէյեադի՝ խրատը աղբեր,
Զի մի նմանիցիս՝ չորացեալ աղբէր.
Ով տեսնայ քեզ անաղ՝ կ՝ձայնէ աղ բէր,
Ասոխի լեզուն է՝ սէ. ոյ. Հիւն. ըէ։

* *

ՅԱՆԿԱՐԾԱԽՕՍ ԲԱՆ.

Շատ միջոց է հարկաւոր,
Որ եփվի մարդոյ հումն.
Ո՛վ է կարող անսովոր,
Ուտել զանհամ դդումն։

„ՍԷՅԵԱԴ“

Ի ԴԻՄԱՑ ՏՐԴԱՏԱՅ ԱՐՔԱՅԻ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ.

Արդարադատ ես ճշմարիտ՝
Նրբանկատ ես ճշմարիտ՝
Աշխարհ համայն փախնու՛ ի քէն,
Վասն զի շատ ես ճշմարիտ։

Ճշմարտութեան ճաճանչները՝
Խաղտեն բուոց աչքերը,
Ճշմարտասէր մարդ չի մնացել,
Մինչ ցերը զանգատես ճշմարիտ։

Մարդիք եդին զչարութեան խոյր,
Մեղաց մէջ դանդաչեն զեդ կոյր,
Մոլորվել են յուղիղ շաւղից՝
Դու զո՞ նախատես ճշմարիտ։

Ես բուն Հայ էի ո՛չ թէ Յոյն,
Յուցի ազգիս ջանք գոյնզգոյն,
Նա արբոյց ինձ մահաբեր թոյն,
Պիտի խիստ դատես ճշմարիտ։

Սէյեա՛դ ո՞վ էր վարդապետը,
Որ չի՛ փարատեց աղետը,
Նուն շատ կայ մի՛ ձգիր փետը,
Զի դու մէկ հատ ես ճշմարիտ։

* *
*

ՏԵՍԻԼ.

Այս ի՞նչ է արդեօք՝ զոր տեսանեմ ես՝ անսահման և լայն,
Զայս տարածութիւն յոյժ պատշաճագոյն է երկնից միայն,
Յարկարծ ճայթեցաւ կամար ամպրոպեան՝ հոսեաց հուր և ջուր,
Այրեաց և ջնջեաց զցամաք և զծով՝ աշխարհի համայն.
Ա՛արդիք լողային ՝ի խորս ջրոց՝ մերկ նման ձկանց,
Էհաս ականջիս խրոխտ և ահեղ՝ հրեշտակական ձայն,
Որ ասեր. „վա՛յ ձեզ, վա՛յ որդւոց ձերոց՝ սերունդք Ադամայ,
„Լուսափայլ ամպով իջանէ յերկնից՝ ահա՛ սուրբ փեսայն—
Ազատել զմարդ որ ՝ի սէր նորին՝ տքնի, չարչարի,
Ո՛չ զամենեսեան՝ այլ միայն զգ Հայն՝
Որոյ կեանքն էր մինչ ցարդ յոյժ երկար շղթայ նեղութեանց,
Փորձեալ Արարիչն եգիտ արժանի՝ զնա միմիայն“։
Ասացի ո՞ տէր՝ ես ծառայ քոյ եմ՝ և աղախնոյ քոյ,
Զայնեաց թէ Սէյեա՛դ գիտեմ զամենայն պիտոյ չէ վկայն։

* *
*

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՓՈՂՈՅ.

Փողը յաշխարհ մտնելից առաջ այսքան զրկանք չ'կար.
Ոսկէ դարը նա էր որ՝ աւելորդ հանգամանք չ'կար.
Մարդը իւր կեանքից գոհ էր՝ զի գլխովին տանջանք չ'կար.
Փոքր ընչով հարուստ էին՝ չափից առաւել ջանք չ'կար.
Մէկ վիճակի տէր էին՝ զանազան աստիճանք չ'կար.
Որչափ որ փող ունենաս՝ նոյն չափ էլ զրկող կ'ունենաս։

Փողն է մեզ զրգռողը՝ որ չենք կարում հանգարտ լինել,
Կամում ենք միշտ ընկերաց՝ միջին փառաւոր մարդ լինել.
Ամենին հրամանատու եղնիլ միայն անպարտ լինիլ,
Առանց իրաւանց գոռալ՝ խրոխտալ, փքվիլ, հպարտ լինիլ,
Մինչի փողոյ ծագիլը՝ մարդկանց մէջ հառաչանք չ'կար.
Որչափ որ փող ունենաս և այլն։

Փողն է մարդոյն մարդկութեան՝ սահմանի միջից հանողն,
Փողն է նրան ամենայն չարութիւն ուսուցանողն,
Փողն է մեր միջին ոխոյ, նախանձի, սերմը ցանողն,
Փողն է մեզ մեր Աբարչի մօտին սև երես անողն,
Մարդ սրանցից ազատ էր մինչդեռ դրամոց հանք չ'կար.
Որչափ որ փող ունենաս և այլն։

Փողն է մայրը մարդկային ամենայն հակառակութեանց,
Փողն է ծագող տերութեանց մէջ եղեալ երկպառակութեանց,
Փողն է պատճառ գոյնզգոյն՝ շնութեանց, անառակութեանց,
Փողն է աղբիւր մոլութեանց, գողութեանց, խայտառակութեանց
Մինչի փողոյ դուրս գալն՝ երկիւղ և կասկածանք չ'կար.
Որչափ որ փող ունենաս և այլն։

Փողն է որ մարդոյ հոգին՝ կտայ յաւիտեան 'ի կորուստ.
Շատ մարդիք փողոյ մասին՝ մշտական անկան 'ի փախուստ,
Ով փող ունի փարթամ է ով որ չունի է անհագուստ,
Փողը մեր մեղաց համար՝ պատիժ է տուած 'ի վերուստ,
Ինչ մարդում որ շատ փող կայը՝ նրանում խղճմտանք չ'կար։
Որչափ որ փող ունենաս և այլն։

Փող եթէ քոյ զաղ տաղդ՝ խելիւ փոխեմ կդառնաս փոխ,
Փոխը տաճկերէն քաք է՝ ով կուլի նրան ցանկացող.
Թէ դու լաւ բան լինէիր՝ մայրդ էրը կուլէր անարգ հող,
Ինքդ ստոր վիճակից՝ յետոյ եղեր մարդկանց դատող,
Ինչքան որ դու չ'կայիր՝ մարդկանց մէջ ստգտանք չ'կար։
Որչափ որ փող ունենաս և այլն։

Փող քոյ մեծ զօրութիւնդ՝ բազում բանաստեղծք ճառեցին,
Քեզանով շատ յիմարներ՝ ընդ գիտնոց հակաճառեցին,
Երեսուն արծաթ առեալ՝ մարդիք զԱստուած վաճառեցին,
Քեզանով շատ անաչառ՝ դատաւորներ կաշառեցին,
Սէյեմդ էր դու էլ չառիր՝ էն պէս հեշտ աշխատանք չկար։
Որ չափ որ փող ունենաս և այլն։

* * *

ԵՐԳ.

ՑԱՂԱԳՍ ՀԱՑԱՍՏԱՆԻ.

1. Գթա՛ եղկելւոյս բարելուր հրեշտակ,
Ես անսատար եմ,
Լո՛ւր զաղաչանս.

Դու իսկ կարմիր վարդ՝ ես դերի Սոխակ,
Խեղճ սիրահար՝ եմ,
Երվում է ջանս.

Սէրդ այրեց զիս իբրև վառ կրակ,
Օգնեա՛ անճար եմ,
Ո՞վ սիրաբանս.

Գովաբանելոյ չեմ ես ընդունակ,
Լեզուաբ տկար եմ,
Իմ աննմանս։

2. Ահա՛ եկն էհաս ժամանակ գարնան,
Ծաղկել է այգին,
Վազարշապատու,

Դաշտն էջմիածնայ է մէկ աննման,
Զմրուխտ քար անգին,
Եդեմ կենսատու.

Լեառն Արագած, Գաւառն Արքարան,
Են զարդարած կին,
Կամ թէ փայլածու,

Սոքա բովանդակ էին իմ վիճակ,
Ո՞նց պատմել կարեմ,
Յիմար անբան։

3. Հրաշագործ ուխտ է դուրբ խաչն Արկազեան,
Ընտիր Այսասին,
Եւ վանքն Սմաղու.

Վերջինն է արձան ազգին Օրբելեան,
Հաւատոյ մասին
Հզօր և ազդու.

Սրանցով պանծայր մայր մեր Հայաստան,
Զար աւուրք հասին,
Փշրեցաւ զեդ ձու.

Նա չէր մեղաւոր պատճառն էր Վասակ,
Ես ո՞նց նկարեմ,
Նորա պէս շանըս։

4. Դու հեզիկ Զեփիւռ հասո՛ զլուր իմ,-
Առ վարդ նազելիս,
Մեղմը և հանդարտ.

Թո՛ղ անհոգ լինի զի տքնի՛ ի զուր,
Զի ես մեռեալ դիս,
Զեմ դեռ մեղայ զարդ։

Սէյեա՛դն եմ նա է միշտ իմ կերակուր,
Համով ուտելիս,
Կզարմանայ մարդ,

Բայց՝ ի նմանէ չունիմ առ և տուր,
Մէկ ես եմ, մէկ ձիս,
Իսկ ժրաջան սարդ։

* * *

ՁԱՅՆ

Ընտանեաց Սէյէարի տա նա վասն 'ի նանիր աշխատանաց նորա 'ի շահ ազգի:

18$\frac{27}{4}$61.

Քոյ աղէխարշ բարբառով՝
Սէյեա՛դ չի զարթնում ոչ ով,
Հայոց ազգի սիրտն է հով,
Չի եռալ քոյ խօսքերով։

Նա իւր պալատքն անգին՝
Արար հաւասար գետնին,
Դու կամիս որ նա կրկին՝
Դառնայ յիւր վիճակն հի՞ն։

Արի՛ կեանքդ մի՛ կորցուր՝
Այդ առարկի վերջը տո՛ւր,
Հայք շատ քաղաքներ ամուր՝
Տուին թշնամեաց 'ի զուր։

Ունին մարդկային պատկեր,
Դլուխ, ականջներ, աչքեր,
Քիթ, բերան, ձեռներ, ոտներ,
Միայն չունին մարդոյ սէր։

Սէրն է ազգի հաստ սիւնը,
Գերանն է գիտութիւնը,
Առանց սէր բազմութիւնը,
Է գարնանային ձիւնը։

Հայք իրանց հայրենիքն՝
Որ էր բարեբեաք լիքն,
Թողին չի՛մացան յարգիքն,
Տիրացան վայրենիքն։

Գիտեմ սոցա պատճառն՝
Է պատճառաց Պատճառն,
Մինչ չի հասնի Ամառն,
Չի հալվիլ Հայոց սառն։

Հայք դեռ ձրմրռան մէջ են,
Նոցա ոստքը մրճէճ են,
Նրանց արհեստքը վէճ են,
Սիրոյ հուր չունին գեճ են։

Որքան աղաղակ անես՝
Իմացիր կ'ը փոշմանես,
Ինքդ մէկ անգօր բան ես,
Թմրած ազգին ի՞նչ կանես։

Սէյեա՛դ թէ և ես կին եմ՝
Բայց հմտութեամբ յոյժ հին եմ,
Լո՛ւր ինձ քեզ մատաղ լինեմ,
Քոյ բարեպաշտ Ոսկին եմ։

* * *

ՊԱՏԱՍԽԱՆ

Ոէյեարէ հանդէպ Վէրոյ Գրէալ աւաջարշաւիչեանց Յ. Մուանոյ Խրոյ.

Քեզ ի՞նչ ասեմ ոսկի Ջան,
Զուսնիմ խօսքիդ պատասխան,
Տիպ Հայք էին քեզ նման,
Որ քանդվեցաւ Հայաստան։

Միաբանութեան գինը՝
Զիմացաւ նրանց մինը,
Էնտուր Էջմիածինը,
Մնաց Պարսից ապատան։

Որդիքը Հայաստանին՝
Յունաց տուին մեծ Անին՝
Զեռամբ Սարգիս իշխանին,
Որ չունէը Հայոց նշան։

Ուր չէք միաբանութիւն,
Զէք անդ և կենդանութիւն,
Զ՚կայ զանազանութիւն՝
Ի մէջ դրժողի և շան։

Հայք ի կռապաշտութեան՝
Ունէին վարք հաշտութեան,
Բայց ի խաչապաշտութեան,
Յատելութեան մէջ անկան։

Գիտելով զի Տէրն մեր՝
Ուսոյց հաւատ, յոյս և սէր,
Չի գիտեմ արդեօք ընդէ՞ր՝
Հայք իրար թշնամացան։

Ասում ես թէ պատճառն՝
Էր պատճառաց Պատճառն,
Յայտնի գիտենք չոր ծառն՝
Պտուղ չի տալ յաւիտեան։

Ծառը պիտում է ջրած,
Իսկ ազգը միշտ գրգռած,
Եւ բթութիւնը սրած,
Որ լինի նա ժրաջան։

Ազգն է կատղած երիվար,
Պիտի ունենայ կառավար,
Թէ վերջինը է խաւար,
Զին կրանկանի կործան։

Ես պիտում է մինչ ցմահ՝
Լամ և ողբամ յազգիս շահ,
Չի ողբն է հաստատ գրահ,
Եւ գործիք բժշկական։

Թէ ողբալ գիտենայինք,
Թագ և գահ ունենայինք,
Արդ ևս թէ չ՚երկբայինք,
Կարող եմք լինել արժան։

Հայոց օրը ախ, վայ է,
Ով բնութեամբ Յուդայ է,
Իմացէք անշուշտ Հայ է,
Նա է 'ի ընէ դաւաճան։

Սէյեադն եմ ազգիս ծառայ,
Շատ ահ քաշելից մեռայ,
Ազգի սէրը մեծ բեռ ա,
Չէ մարդ պրծանիլ տական։

*
* *

Հաւապոյ և ուռոմն սէրը Շամախւոյ Հայերի։ $18\frac{30}{4}61$.

Հազար ութ հարիւր վաթսունու մէկ թուի՝
Ապրիլ ամսոյ երեսունն էր կիւրակի՝

Զանգը տուին ես ելեալ գնացի ժամ,
Ինքս ինձի ասացի թէ ուշ եգամ,

Մտեալ 'ի տաճար տեսի ոչ ոք չկայ,
Ժամարարը կամենում է յաշխարհ գայ.

Երբ որ տեսաւ երկու այր գոյ և մէկ կին,
Սարջացաւ զայրացաւ խեղճի հոգին,

Տեսանելով իւր որդւոյ ցրտութիւնը,
Առ տաճարը և միջի սրբութիւնը.

Երեք սև փող տուին նմա 'ի ժամաց,
Աշխատանաց հայելով հանեց յոգւոց,

Հասկանալով տէր հօրը սրտի ցաւն՝
Խոստացայ ես տարածել զայս համբաւն։

Կանոնն է Շամախւոյ Հայ ժողովուրդոց,
Երբեմն ժամ կ'գան է մեծի պահոց,

Իսկ եղեն արժանի հաղորդութեան,
Յետոյ իրանց կտան պարապորդութեան.

Պաս չեն պահիլ՝ ժամ չեն գալ՝ ժամոց չեն տալ՝
Դաշտ կը գնան՝ կամենալով արբենալ։

Հագուստներն տեսնես կասես Պարսիկ են,
Կամ երաղով՝ գինով՝ լքցրած տիկ են,

Թիւ նոցա հասանի ցը վեց հարիւր տան,
Կէսը Հայ է կէսը նոր Լիւտերական.

Առաջինք վերջնոց են առաչօք հակառակ,
Եւ բնակեն կեղծիւ ընդ միմեանց երկպառակ,

Բայց վերջինք են ծառայ աւետարանին,
Առաքելոց թողած կտակարանին.

Առաջինքը չեն գիտում ի՞նչ է հաւատն,
Խաչակնքելն է հաւատ կարծում շատն,

Միայն գիտեն ծունր դնել մոմ վառել,
Տաճարի մէջ միմեանց հետ հակաճառել.

Տասնից մինը չ'գիտէ աղօթք տերունական,
Ո՞վ է տեսել Շամախեցիք գիրք կարդան.

Վեց հարիւր տան միջից (ասեմ զարմացիր),
Հազիւ երկու մարդ ստանայ զօրագիր.

Եւ սոքա չեն Շամախեցի այլ նորաեկ,
Շամախեցին ուսման չի տալ մէկ կոպէկ(*).

Բարբառները լսես կասես թէ չեն Հայ,
Կարծեօք այս մասին իրանք էլ են երկբայ.

Ահա սա է ձևը նոցա զրուցի,
Զոր իսկապէս ի ստորև ես ցուցի.

Մէկ օր Գեօգչայևը ընդ Ջիօնգայևին՝
Հրապարակի մէջ կանգնեալ խօսում էին,

Գեօգչայևը ասաց „աղայ Ջեօնգիայև,
Գեաս հինչ մեքեալ եաւաշիկ քինիանք վերև,

Բարցրիկ տեղում նստանք թամաշայ անանք,
Կիրակիա թէ աւօրալ սեյր չանանք՝

Էտով պիտի բեանում չիւրիմիշ իլանք
Մեքալ ջան անք աղբաթիխեր հա դուլ չեանք,

Ջիօնգեայևը նրան տուաւ պատասխան.
Ես ուզումամ քինամ զասաբխանան,

Քանէ օր ա միս ան ուզում խիզանըն,
Միս պիտի մայ կերաց աստիւրան տանըն.

Էգուց ալիօր կնկնի ամառվայ շոքը՝
Միս ուտողի կը երվի սիրտն ու թօքը.

Ամառվան խօրակնայ մաճունն ու թանը՝
Մասրափ չունի աղարթու չիլաճ տանը“։

(*) Ռուսաց պղնձեայ դրամ է։

Գեօգչիաևը ասաց. „չես գիտում զուզի,
Պիտի ընկնի ամառնը մարդ զարփուզի.

Սիրքայ դօշաբ պիտի և թազայ քովի,
Դիւմաշի զայմաղ կամ թէ արաժան կովի“։

Ես այսքանին ականջ տուեալ անցկացա,
Թէ յետ այնու ինչ խօսեցին չիմացա,

Ահա սա է Շամախու բառը Հայերէն,
Մէկը Հայերէն է հինգն թուրքերէն։

Սոքա ընդէր կուզեն ուսում ստանալ՝
Որ չի լինում իրանց լեզուն հասկանալ.

Վայ քոյ օրիդ թշուառացեալ Հայաստան՝
Որ մնացիր այսպէս որդւոց ապաստան.

Հին որդիքդ կոչվէին Մամիկոնեան՝
Իսկ այժմեանքը Գեօգչայեան են Ջեօնգիաեան,

Այսինքն է կապոյտակնեան և եղնեայն.
Սէյեա՛դ սոքա Հայ են լոկ կոչմամբ միայն։

* *

ՅԱՆԿԱՐԾԱԾԻՆ ԽՕՍՔ.

Մարդ գոյ մարդ է անթերի, մարդ գոյ որ վարդ է անթերի,
Մարդ գոյ զարդ է անթերի, մարդ գոյ կախարդ է անթերի,
Մարդ գոյ սարդ է անթերի, մարդ գոյ թակարդ է անթերի,
Սէյեա՛դ այս փուչ աշխարհը՝ անհաստատ նարդ է անթերի։

ԵՐԳ.

Յաղագս Գրոնիան հոգւոյ։ 18$\frac{1}{5}$61

Մարդոյն պիտոյ է ուսենալ՝
Աղուիսու պոչ՝ գայլոյ ատամ.
Թէ զայս կարենար իմանալ՝
Դրախտից չէր զրկվիլ Ադամ։

Նա իւր յանցանաց պատճառը՝
Եդ զկին իւր Աստուածաստեղծ,
Զի նա էր պատրանաց ծառը,
Զոր յանձն էառ նա անկեղծ։

Անսահման ճշմարտախօսին՝
Յիմար ասեն այժմեան տղայք,(*)
Որպէս մեր փրկիչ Քրիստոսին՝
Դիւահար կոչէին Հրեայք։

Մարդ գոլով չարեաց մեքենայ՝
Է նա միշտ բարեաց հակառակ,
Թէ դժոխքից չի վախենայ՝
Շատ գործ կը գործէ խայտառակ։

Թէ յօրինաց մարդ չ՚երկնչէր՝
Անշուշտ կ՚ուտէր իւր ընկերին,
Սա նմա միայն վայելուչ էր,
Աստուած զայն չ՚եդ գազաններին։

(*) Թարմատար ուսեալք։

Այս բանի ճշմարտութեանը՝
Դոն ապացուցութիւնք անթիւ,
Մարդոյ գազիր բնութեանը՝
Ոխն է ներգործական անիւ։

Մարդ գոլով գանձարան մեղաց՝
Չէ նա լաւ կոչման արժանի.
Սէյեա՛դ մարդը ըստ կոր կամաց,
Շատ կարօտ է կախաղանի։

*
* *

ՎԱՍՆ ՍՐՈՒԹԵԱՆ ՍՏԱՑ.

Արդեօք գո՞յ մէկ սրութիւն՝ որ մարդոյ մտքից լինի սուր,
Կամ մէկ այնպէս սրբութիւն՝ որ նրանից լինի մաքուր։

Մարդոյ մտաց սլացման՝ ժամ և ժամանակ չէ դրված
Նորա խորագոյն թափանցման՝ ո՛չ չափ, ոչ քանակ չէ դրված.
Ամենանուրբ զգացման՝ երբէք օրինակ չէ դրված.
Կայծակօրէն ընթացման՝ յայտնի նպատակ չէ դրված.
Բան չ՚կայ որ նորա պէս ամեն ուրէք լինի ամուր։
Արդեօք գո՞յ և այլն։

Ի քթթել ական կարէ՝ ակնածել համայն աշխարհն.
Հին պատմութիւնք ներկայ են՝ նորա մօտ բոպէ է դարն.
Առ նոքօք անկատար է՝ բնութեան գերակատարն.
Գերանից հաստ կ՚երևի՝ բանաստեղծի հիւսած լարն.
Բան չ՚կայ որ կարենայ՝ իբրև նա լինիլ ընդհանուր։
Արդեօք գո՞յ և այլն։

Այս դարու թանգ գիտութեանց՝ միտքն է մայր աշխատաւոր,
Առանց նրան դժբախտ են՝ ազնիւ, իշխան և թագաւոր.
Ամեն արարածոց միջէն՝ նա է միայն համբաւաւոր.
Նմա ներհակ չեն երբէք՝ ոչ հոգևոր ոչ մարմնաւոր.
Ով նրանից դատարկ է՝ նա ոչ հաց կ'ունենայ, ոչ ջուր։
Արդեօք գո՞յ և այլն։

Մարդ մտօք կը հասանի՝ յոյժ բարձրագոյն աստիճանաց.
Առանց նրան շատ ազանց՝ կեանքը եղև կսկիծ և լաց.
Նրանով նախնի գիտունք՝ արժանացան գովասանաց.
Միտք չունէր հայոց ազգն՝ որ ազգաց միջին որբ մնաց.
Գերի է օտարներին՝ ոչ թագ ունի, ոչ գահ, ոչ սուր։
Արդեօք գո՞յ և այլն։

Թող ով միտք ունի խօսի՝ Սէյեաղ դու յայտնի անմիտ ես,
Քեզ գիտուն կարծես մի՞թէ՝ բայց դիփ գիտեն միամիտ ես.
Մինչև ցերը երախտամոռ՝ ազգիդ օրը ողբալ պիտես,
Ո՞վ չի գիտում որ դու մէկ՝ քանի լեզուօք կարդալ գիտես,
Եթէ կայ փողից խօսիր՝ կարդալը չի տալ կերակուր։
Արդեօք գո՞յ և այլն։

*
* *

ՊԻՏԱՆԻ ԽՕՍՔ.

Յոյժ բաւէ Արքայից՝ հրամանատուաց,
Որ փրկեն աշխարհը՝ թշնամւոյ ձեռաց.

Երկրորդ միշտ ախորժ՝ հայեն սիրելեաց,
Ծնող հայը լինին՝ խեղճ հպատակաց։

Երրորդ զկամս՝ անյոյս ռամկաց,
Կատարեն չթողեն՝ գերի ամօթանաց։

Բազումք թագաւորք՝ բարձրավիզ գոլով,
Զակնարկեալ անցին՝ այս խորհուրդներով.

Արդեօք նրանցից՝ ով զշահ գանձատան՝
Պահպանել կարաց՝ գոլով ընդէմ մարդկան։

„ՍԷՅԵԱԴ“

ԱՆՆՊԱՏԱԿ ՁՈՒԱՐԾԱՒԱՆՈՒԹԻՒՆ.

Շատ միջոց էր չէի տեսել՝
Բարեաւ եկիր աղայ Մարուք,
Ցայտնի գիտենք դու էլ ես էլ՝
Որ ինձանից մեծ ես տարուք։

Գիտեմ շատ կերեր կօնտրաբանդ,
Կերպաս, խինա, խուրմա, գիւլղանդ,
Հարստացել ես դարդիմանդ՝
Գեր խոզոյ ես նման բարուք։

Շունդ չէ ղուլը հապաշին,
Նրանից սև է քոյ կաշին,
Պլոկար խեղճ ղզլբաշին,
Փոխան սգոյ թողար միրուք։

Կամում ես առնել չափաւուլ,
Միրուքդ է տանձի սուկուլ,
Տեսնողք կոչեն քեզ այծի ուլ,
Ընթերցողք խօսքս լուարուք։

Թէև եղբայրըդ էլ է սև,
Բայց նա հրեշտակ է դու դև,
Մարդ չես դառնալ շատ ես թեթև,
Մարդ մաքով չի մարդ, այլ վարուք։

Սէյեադդ եմ վաղածանօթ,
Մոռացել ես զիս անամօթ,
Բանահիւս եմ կ'ստանաս կօթ,
Կմնայ քեզ անուն յատուկ։

* * *

ՔԱՂՑՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Տեսէք դուք՝ այս անօրէն բաղդի բանը,
Որ շանը չայ է տալիս՝ մարդոյն թանը։

„ՍԷՅԵԱԴ"

ՊԱՏՃԱՌՔ

Կորսուած ամենաղջիկ ոչխարների Յոնոյց ալեգի։

Եթէ բազում մասունք չլինին երբէք ամբողջ բան չի լինիլ.
Իշխան, ազնիւ, ռամիկք չի լինին գահ կայսերական չի լինիլ.
Միայն մէկ արհեստ իմացող անձը գիտնական չի լինիլ.
Մէկ առարկի վաճառով մարդ մեծ վաճառական չի լինիլ.
Մինչ չի լինեն զանազան նիւթք նշոյլ շինուածեան չի լինիլ.
Եթէ ընտանիք չի լինին տունը տան նման չի լինիլ։

Մարդը որ մարդ է կոչվում՝ նա ևս ունի բազում մասունք—
Ոտներ, ձեռներ, լեզու, աչք՝ գլուխ, ականջ, քիթ և ունք,
Նա ոնց կարէ մարդ լինիլ եթէ որ չունենայ էստունք,
Կը լինի մէկ անտաշ կոճղ, չի ունենալ երբէք շարժմունք,
Ուրեմն պիտի սրանց սնունդ որ ունենան ազդմունք,
Եթէ ոչ առանց նրանց մարդը շունչ կենդան չի լինիլ։

Տէրութիւնք անպատճառ պիտի ունենան բազմաթիւ իշխան—
Անաչառ, առանց կաշառ, արդարադատ և բանական,
Յօդնութիւն նոյն իշխանաց պիտոյ է շատ ազնուական,
Որք ընուն պէտք տէրութեան վարեալ պաշտօնս զանազան,
Եւ բարի վարուք իւրեանց լիցին օրինակ ռամկական,
Առանց ռամկաց ոչ մէկը խրախոյս գանձատան չի լինիլ։

Ինչ մարդ կամենայ կոչիլ յաշխարհի յայտնի գիտնական,
Նա պիտում է գիտենայ շատ արհեստներ ազատական,
Պիտի լինի քերական, ճարտասան և տրամաբան,
Երկրաչափ և աստղագէտ գիտակ օրինաց բնական,
Սրանց մէկը գիտելով ոնց կուլի մարդ ուսումնական,
Մէկ արհեստ գիտող մարդը Սոկրատայ նման չի լինիլ։

Արդեօք ո՞ր վաճառական միմիայն ծախելով կտաւ,
Հարստութեան տէր եղեալ քաղաքական տիտղոս գտաւ,
Ո՞ր վաճառական մինչ մեծ առևտրոյ մէջ չի մտաւ,
Իւր ընկերաց միջին նա գումար գտեալ հարստացաւ,
Ով մէկ բանիւ առևտուր արաւ աղքատութեամբ մեռաւ,
Հարիւրաւոր հաշիւ գիտող մարդը թուաբան չի լինիլ։

Ինչ մարդ որ կամենում է առնել սկիզբն շինութեան,
Քար ու կիր, փայտ, հող, գործիք պիտի որ դնէ հիմն տան,
Մինչև սոքա չի լինին շինվածք կըլինին չնչին բան,
Որպէս որ Շամախեցիք շարժի տարին նոր հասկացան՝
Թէ առանց կրոյ շինած շէնքով նոքա աղքատացան,
Թոյլակազմ բանի կեանքը յաւիտենական չի լինիլ։

Ամեն դատարկ շինութեան ոնց կըլինի ասել է տուն,
Մինչ նրանում չի լինի մարդ, կին, կատու, շուն, անասուն,
Հաց, ջուր, անկողին, պղինձ տանուտէր արի արթուն,
Որ գիշեր ցերեկ նորա աչքումը չի գտնվի քուն,
Առանց սրանց շինվածը ը՞նչով կտանայ տան անուն,
Որ գլխում ուղեղ չ՚լինի տէրը բանական չի լինիլ։

Յոյնք զայս կատարելութեան ամենաընտիրն ունէին,
Բայց իշխանքն ու ազնիւք տէրութեան հարազատ չէին,
Թողեալ հայրենեաց շահը իրանց շահը որոնէին,
Ռամկաց համար ոչ փող թողին ո՛չ քոյր, ո՛չ դուստր ու կին,
Այս բաներով նոցա դասը չափազանց զզուեցուցին,
Թիւրընթաց անձանց միջին արդար դատաստան չի լինիլ։

Ինչ չարութիւն որ նոցա սիրտը ուզեց կատարեցին,
Իրանցից ստորների հետ գազանաբար վարվեցին,
Զարժանիս թողեալ անարժանից պաշտօնք վաճառեցին,
Միամիտ մարդ որսալոյ շատ թակարդներ հնարեցին,
Այն փայլուն կայսեր գահը ընդ հողոյ հաւասարեցին,
Ցոփութեամբ վարվող անձը մեծութեան արժան չի լինիլ։

Պաշտօնակալաց արատը յառաջ գնալով հաստատաւ,
Հպատակաց դասը չարիք քաշելով յոյժ նուաստացաւ,
Անները գործութիւն օրինաց տեսեալ խստիւ ստրջացաւ,
Նոցա որպիսութիւնը երկրորդ Մուհամմեդ հասկացաւ,
Յունաց ռամկաց դրութիւնից նա մեծ զօրութիւն ստացաւ,
Տեսաւ որ այս հանգամանքը իւր կամքին խափան չի լինիլ։

Թէ և Յունաց մեծ տէրութեան տապալողը Մուհամմետ էր,
Բայց նա չէր, այլ խեղճ ռամկաց աղաղակը եհաս առ Տէր,
Որք յոյժ նեղասրտեալ գոլով մոռացան զհայրենեաց սէր,
Անօրէնք զմեծն Պօլիս քակեալ արարին տակն ի վեր,
Ծիրանածին կայսր նոցա եղև չար արարմանց նուէր,
Ամեն տեղ այսպէս կլինի ուր չարեաց սահման չի լինիլ։

Ինչ տէրութիւն որ ունի ուղիղ կշիռ սուրբ դատաստան,
Այն տէրութեան գլուխը մարդ գոլով է Աստուածանման,
Էնպէս տէրութեան միջումը բոյն չի դնիլ չար Սատանան,
Հպատակը կունենայ միշտ հաւատարմութիւն անսահման,
Տիփ առաքինի կ՚լինի թէ իշխան թէ ազնուական,
Սէյեա՛դ իմա՛ որ այն տեղը նեղութեան նշան չի լինիլ։

*
* *

ԵՐԳ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ.

Նազով ընթացէր նախշուն Սիրամարգ,
Գուցէ կարենաս նմանիլ նազելոյս,
Նա գիտէ բոլոր սիրելութեան կարգ,
Իսկ դու բաց 'ի փետրոյ չունիս այլ յոյս։

Պոչդ շողշողուն ոտներդ սև սև,
Մէկը պատիժ է քեզ միւսը պարգև,
Իմ եարը ունի հրեշտակային ձև
Տեսնողը կասէ երկնային լոյս։

Անհաճելի է ձայն քո և անտաշ,
Եարիս ձայնն է համեղ, սրտաքաշ,
Լսես կը քաշես ախ, կանես վշ վշ,
Դու վավաշոտ ես նա անարատ կոյս։

Գլխիդ դրել ես եռանկիւն թագն,
Հազար թագ արժէ եարիս մէկ պագն,
Նաժիշտք նորա են վարդ, մանուշակն,
Նա է հոգևոր թագն խղճալոյս։

Դու մէկ թռչուն ես անլեզու անբան,
Իմ նազելիս է Մայր Փրկչի մարդկան,
Նա է ցգալ իւր Որդւոյն դատաստան,
Թշուառ Սէյեանդիս սատար, խրախոյս։

*
* *

ԵՐԳ.

Յօրինեալ 'ի Գիմաց Ն. Գրավանից անապատին Վայոց Ձորոյ, ըստ եղանակի „Ամ զամբեր զամբեր“ երգոյն։

18$\frac{7}{5}$61 'ի Նամախի։

Ես զարմանալէն Վայոց Ձորոյ Վան, (*)
Օրբելեան ազգի շիրմայ դամբարան,
Նախ մեծ զարդ էի Հայոց աշխարհի՝
Անասնոց Տաճկաց եղէ բնակարան,
Վատ վիճակ, վատ վիճակ, վատ վիճակ,
Ուստի զքեզ գտանք։

Երբ Հայք կորուսին Հայրենեաց սուրբսէր,
Ցիրուցան եղեալ թողին զիս անտէր,
Ժամանակն անգութ արար զիս աւէր,
Բուսոց կացարան հովուաց կրակարան։
Վատ վիճակ, վատ վիճակ, վատ վիճակ,
Ուստի զքեզ գտանք։

Երբեմն ազգ իմ ունէր Շահանշահ,
Հեղգութեամբ կորոյս զանգին թագ և գահ
Չի թողեալ նորա զսուր և զրահ,
Եղև իւր ոտից որոգայթ, դարան։
Վատ վիճակ, վատ վիճակ, վատ վիճակ,
Ուստի զքեզ գտանք։

(*) Այս հրաշակասոյց երկյարկեայ Վանն գտանի հին Նախիջևանու երկրի, Տարալագեազ գաւառակի, Ամաղու գիւղն. յորում դրի ես 'ի 1857 ամի զՏապանս եշխանաց Օրբելեան ազգի, քանզի Գաւառակապետ էի անդ։
Յան. Հեղինակի։

Աշխարհն Սիւնեաց եբեր ինձ զաւակ,
Դիմօք մարդանման մտօք աւանակ,
Անուամբ չար Վասակ վարուք անառակ,
Ուխտարանս շինեաց կռոց զոհարան։
Վատ վիճակ, վատ վիճակ, վատ վիճակ,
ուստի զքեզ գտա՛ք։

Վա՛յ քեզ Հայաստան որբացեալ աշխարհ,
Լուծն թշնամեաց արար քեզ խոնարհ,
Երբեք Փրկութեան չունիս ճանապարհ,
Սէյեա՛դ վիզդ էր չես ձգում պարան։
Վատ վիճակ, վատ վիճակ, վատ վիճակ
ուստի զքեզ գտա՛ք։

*
* *

ՊԻՏԱՆԻ ԽՕՍՔ.

Ինչ մարդ որ ծածուկ ցաւը բժիշկին չ՚ասեց թագցրուց,
Նա իւր ձեռօք այն ցաւոյն պողպատեայ զրահ հագցրուց։

„ՍԷՅԵԱԴ։“

ԱՆԿԱՐԳ ՄԱՐԴ.

Մարդկութեան կարգից ելեալ մարդից վատ անասուն չ՚կայ.
Անկարգ անուանից ստոր աշխարհի մէջ անուն չ՚կայ.
Ինչ մարդ որ անկանոն է նրանից վատթար շուն չ՚կայ.
Եթէ նա Քրիստոնեայ է երեսումը մեռուն չկայ։

Անկարգ մարդը աղբիւր է ամենայն կերպ արատութեանց.
Արուապիղծ է իգամոլ վարժապետ ամեն վատութեանց.
Կաշառառու, աչառու մեծ հալածիչ ազատութեանց.
Թէ և ասեն նրանից գերագոյն բարուն չկայ։

Գիտութիւնը վատ մարդում է ազնիւ մեղր շան տկում,
Որ պիղծ գոլով չի ուտվում հանեալ յաղբանոց են ձգում,
Անգիտութեամբ ուտողքը զզուելով, փսխում են թքում,
Նա իսկ ժահահոտ գէշ է՛ի նմա հաւատոյ բուն չկայ։

Մարմին, մարմին արդեօք դու ընչո՞ւ ես հոգւոյն թշնամի,
Որ չես թողում նա լինի պետ քեզ նման անզգամի,
Յայտնի գիտեմ որ դու ես Սանդարապետին խնամի,
Մեղսագործութեան մասին քոյ մէջ դադար և քուն չկայ։

Սէյեա՛դ դու ո՞նց ես կարում մարմնոյ ձեռիցը գանգատել,
Մեծամեծք միշտ ծառայ են մարմնոյ չես կարող նախատել,
Քանզի ցարդ ոչ ոք իրան համազգիներին չէ դատել,
Թէ որոնես այս ցաւից ազատ մէկ հայկազուն չկայ։

*
* *

ՁԱՐԱԽՕՍ.

Զարախօսն է կատաղած շուն,
Միշտ կը հաչէ թէ և՛ի քուն,
Եթէ տէրը լինի գիտուն,
Իսկոյն կհատանէ զլեզուն։

„ՍԷՅԵԱԴ։“

ԱՊԱՅՈՅՑ

Ռնակեան ատելութեան Հայոց:

Մէկ վարդիւ գարուն չի լինիլ իմաստնոց թողած առակ է.
Էն մարդից պարուն չի լինիլ որ իւր ազգին հակառակ է.
Այն տանիցը տուն չի լինիլ որոյ մէջը երկպառակ է,
Նրան մականուն չի լինիլ ով անհայր և անառակ է:

Ազգի հակառակութիւնը իրան համար մահ կը բերէ,
Իսկ աներկապառակութիւնը արքայական գահ կը բերէ,
Ազգայնոց թանգ յատկութիւնը անասելի շահ կը բերէ,
Սա՛ի Հայաստան չի լինիլ ուր մէկը միւսոյն ներհակ է:

Հայ չկայ որ իրան Հայոյ յաջողութեամբն ուրախանայ,
Ընդհակառակը իւր եղբօր կորուստեանը կը ցանկանայ,
Հայք որ ցիրուցան եղածեն իսկ ատելութեան նշանա,
Մէկը չկայ որ ասէ վա՛յ այս ի՞նչ ճղկելի վիճակ է:

Այս խօսքերիս ապացոյցը է Արծուին Վասպուրական,
Որոյ երկնային ձայնիւը ոգի ստացաւ Հայաստան,
Նորա ազդու քարոզիւը որչափ որ՛ի Տփխիս Հայք կան,
Ասացին սա մեր վանական աստեղաց մէջ Արեգակ է,

Ամպն ատելութեան թանձրացեալ խափան եղև Արեգական,
Ջերմող զի նա տարածեսցէ զլոյս բանին Արարչական,
Որով ցնծայր ՝ի Տաճկաստան որբայեալն Վասպուրական,
Աստուածաբան Վարդապետը Հայոց մէջ անօժանդակ է:

Արծուոյ ձայնը երբ եհաս մեզ ձեռամբ կռնական Հայոց՝
Գիտացաք զի նա սրութեամբ շատ սրտի մէջ կբանայ խոց,
Արեգական ճաճանչները չէ հաճելի աչաց բուոց,
Նոյնպէս զիտնոց գիտութիւնը տգիտաց սրտին նիզակ է:

Արծուոյ նման պատուեցին Հայք մեծ Արբայ Մխիթարին,
Որ թաղեալ իւր Հայրենիքը գնաց կցեցաւ օտարին,
Հայաստանը այս ցաւերով կիսամեռ է սիրտը արին, (*)
Սէյեա՛դ Հայոց ազգի օրը անտանելի դժնդակ է:

Վ Ա Խ Ճ Ա Ն:

(*) Կրնատեալ արիւն ասել է:

1861 ամի Մայիսի 9 Շաբաթի:

Ալբոյ ամբոխը երբ ետքս սեղ ձեռանը խոսիմ չուտաց,
Գիտասցիք որ ես սուրվեմանը չեմ սիրի զէշ կերպով խաղալ,
Սիրելիս ամենայնիվ էլ չեմ ցանկի տեսա բուռնա,
Ուրախութիւն վիճակս վիճակիդ ուրախաց սիրելս նիստ է։

Ալբոյ նման սատանայնի չարք սեղ Արիսի Սիրելիներ,
Որ խոսքով իւր չարիքիցդ դուն վրդովաս ամենեքն,
Հանապատը ան ամբոխով վիճակս է սիրելս ուրիշ,(*)
Սէրդ դուն չունայ ասիր որ ոչխարդի գոյութիւն է։

Վ. ԱԼԻՇԱՆ Ը։

(*) Այդ ասելով սիրելս ասել է։
1861 տարի Հունիսի 9 Համբարձումն։

17154-17158

2013